# Ազգ
Azg

8-14 ՄԱՅԻՍ 2026 ՈՒՐԲԱԹ 016(5884)

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651


## «Մշակութային ցեղասպանություն». Գերմանիայի դաշնակիցը եկեղեցիներ է ոչնչացնում»

Այս վերնագրով հոդված է հրապարակել գերմանական t-online լրատվական հանրահայտ պորտալը: Թոբիաս Շիբիլլայի (Tobias Schibilla) գրին «Ազգը» բազմիցս է անդրադարձել, գնահատել նրա ստույգ բառերով իրականությունը ձեւակերպելու համարձակությունը: «Ադրբեջանցի զավթողները (բնագրում՝Besatzer-Ա.Հ.) մի քանի եկեղեցի են ոչնչացրել Լեռնային Ղարաբաղի հայկական շրջանում: Իրավիճակը Գերմանիայի համար կարող է քաղաքական տեսակետից զգայուն դառնալ», ձեւակերպում է Շիբիլլան մայիսի 2-ի հոդվածում՝ իրազեկելով, որ Ադրբեջանը ԼՂ էթնիկ զտումից հետո ջնջում է հայկականը, իսկ գերմանացի քաղաքական գործիչները այցելում են խեղված Ղազանչեցոց: « Արբանյակային պատկերները ցույց են տալիս, թե ինչպես է Բաքվի ռեժիմը փորձում վերացնել հայկական մշակույթի՝ նույնիսկ վերջին հետքերը տարածքում»: Կանդրադառնանք մեր առաջիկա համարում:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Ձեւով եվրոպական, խորքով՝ նատոյական հավաքը Երեւանում

Որքան էլ փորձենք մեզնից հեռու վանել հոռետեսական մտքերը հետընտրական Հայաստանին սպառնացող փորձանքների մասին՝ չի ստացվում, առավել եւս՝ երբ հանրապետության հիմնադիր նախագահը նույն մտահոգությունն է արտահայտում հրապարակավ: Եվ հարցումը գալիս է ինքնաբերաբար. ինչո՞ւ վարչապետի աթոռին հայտնված պատուհասը մի քանի օր առաջ հունիսի 8-ն, այսինքն՝ ընտրությունների հաջորդ օրը, հռչակեց համաժողովրդային հանրահավաքի օր՝ մայրաքաղաքի կենտրոնական հրապարակում: Սովորաբար համապետական ընտրություններին հաջորդած օրերը խիստ ծանրաբեռնված են լինում մասնակից կուսակցությունների ու դաշինքների համար: Հաղթածները ներքին պաշտոնաբաժանումներն են կատարում, պարտվածները՝ պատճառները, թերացումներն են արձանագրում՝ հաջորդիվ նման բան թույլ չտալու համար: Մինչդեռ Փաշինյանը, ի հառաջագունէ, ժողովրդին հրավիրում է «մեծ» հանրահավաքի: Ի՞նչ անելու, ի՞նչ ասելու համար: Չարագուշակ որեւէ բան չի՞ նկատվում այդ հրավերի մեջ: Սեփական պարտության թե հաղթանակի (Աստված մի՛ արասցե) դեպքում սպառնալիք չկա՞ մրցակիցներին չաքուչային, ասֆալտային, պադվալային վրեժխնդրության ենթարկելու վերաբերյալ:

Ահա՛ երկրորդ սպառնալիքը՝ «կա՛մ Փաշինյան, կա՛մ պատերազմ» թուրք-ադրբեջանական շանտաժը, որը թեւավորել է «Նե՞ օլդու, Փաշինյան, նե՞ օլդու» երգից ոգեւորված մեր «հերոսին», որը պատրաստ է կրկնել ու վերակրկնել նույն «հերոսությունները», այս անգամ նաեւ Եվրոմիության ծափահարությունների ներքո:

Չե՞ք հավատում, հետեւեք, եթե արդեն չեք հետեւել, օրերս Մարզահամերգային դահլիճի սրահներում այսպես կոչված Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ համաժողովի աշխատանքին, մասնակիցների ցանկին, ընթացքում հնչած խոսքերին, կնքված պայմանագրերին:

Այլ հանգամանքներում մենք պիտի հպարտ ու գոհ լինեինք, որ նման համաժողովը տեղի է ունենում մեր երկրում, այն էլ՝ բարձրագույն մակարդակով, այն էլ աշխարհաքաղաքական վտանգավոր զարգացումների, ռազմական կործանարար բախումների, գերզարգացած սպառազինության կիրառման պայմաններում, միջուկային զենքի օգտագործման սպառնալիքի ներքո նաեւ: Սակայն ուշիուշով հետեւելով համաժողովի ընթացակարգին ու ելույթներին, դրանցում ես տեսա երկու բան. լռելյայն՝ Փաշինյանի վերընտրությունը, որպես հուսալի գործակալի, ապահովելու ջանքը, իսկ երկրորդ՝ կովկասյան տարածաշրջանից Ռուսաստանին դուրս մղելու ձգտումը: Տիրապետողն այնտեղ ռուսոֆոբիան էր, որը առավել հստակ արտահայտվեց իր տիկնոջ՝ Բրիժիտի դաստիարակչական չափալախներից դեռեւս ուշքի չեկած նախագահ Մակրոնի շուրթերով. ի՞նչ կարիք կա հանդուրժելու Հայաստանի հյուսիսում, Թուրքիայի հետ սահմանագլխին, 4000 հոգանոց ռուսական զորք պահելու, մինչեւ ե՞րբ եք հանդուրժելու 102-րդ ռազմաբազայի ներկայությունը ձեր երկրում:

Այլ խոսքով՝ համաեվրոպական քաղաքական հարցերը քննարկելու կոչված համաժողովը վերածվեց ՆԱՏՕ-ի ընդլայնման, մեր տարածաշրջանում վերջինիս հաստատման, Հայաստանը Հյուսիսատլանտյան բլոկի կազմում ընդգրկման արշավի, գիրկընդխառն՝ Թուրքիայի եւ նրա աջակից ու ցեղակից Ադրբեջանի հետ, ընդդեմ Ռուսաստանի եւ մեր ազգի մյուս բարեկամ ու հարեւան Իրանի:

Արդ, ո՞վ է կործանարար վարչապետին նման իրավունք տվել տնօրինելու Հայոց երկրի ներկա եւ ապագա քաղաքական, ես կասեի՝ գոյութենական ճակատագիրը, որը, կրկնենք, չարագուշակ վիճակներ է խոստանում մեր երկրին, ժողովրդին ու համայն հայությանը: Ո՞վ չգիտի, որ նման համաժողովներից առաջ, որպես հյուրընկալ երկիր, իրավունք է իմանալ հավաքի նպատակը, գործողությունների հաջորդականությունը, դրանց նպատակահարմարությունը հյուրընկալ երկրի շահերի տեսակետից: Ժողովրդավարական որեւէ երկրում նման գործադիր իշխանությանը խորհրդարանական իրավունքի ուժով իսկույն կպաշտոնազրկեին ու դատական ատյանի առջեւ կկանգնեցնեին: Սակայն քանի որ մեր ունեցածը ընդամենը խորհրդարանական բռնապետություն է (Parlamentarian Dictatorship), փաստորեն գոյություն չունի Սահմանադրական դատարան: Հետեւաբար, Փաշինյանի նման մարդիկ, ինչպես նրա հյուրերից՝ համաժողովին մասնակից Զելենսկու նման բախտախնդիրներ են, նման հանցանքները թույլատրելի են:

Այս պայմաններում, որքան էլ որ զգացական ու քաղաքական տեսակետից դժգոհ լինենք Ռուսաստանից, իրավունք չունենք ուրանալու, որ այդ երկրի ղեկավարությունը եթե նույնիսկ վատություն չանի մեր դեմ, ապա նույնիսկ լավություն չանելով կարող է վնասել ու պատժել մեզ, մեր ժողովրդին:

Հայաստանը այսօր եւ ընդմիշտ, քաղաքականապես, տնտեսապես ու ռազմաստրատեգիական առումով չի կարող ընդդեմ գործել Ռուսաստանին, եւ փաշինյանները չեն, որ կարող են փոխել պատմական այդ իրողությունը:

ՆԱՏՕ-ն բերել մեր երկիր՝ նշանակում է թուրքին բերել կրկին ցեղասպանելու մեզ:

Եվ այս ամբողջը ինչի՞ համար: Բռնապետական իշխանությունը շարունակելո՞ւ, երկիրն ու ժողովուրդը հակամարտ պետությունների արանքում խցկված պահելո՞ւ, դարավոր մեր հարեւան Պարսկաստանը թշնամացնելո՞ւ, թե՞ ցեղասպան Թուրքիային անցք տալու, որպեսզի ամբողջացնի իր սեւ գործը: Իսկ վտանգի ժամանակ ի՞նչ է անելու ՆԱՏՕ-ն՝ գլխավորությամբ հոգատա՜ր Ֆրանսիայի, որը, հակառակ Ազգերի լիգայի որոշմանը, դեռեւս 1939 թ. հունիսին, գերազանցապես հայերով, ալավիներով, մահմեդական ու քրիստոնյա արաբներով բնակեցված Ալեքսանդրետի սանջաքը նվիրեց Թուրքիային: 70 տարի հետո ի՞նչը կխանգարի նրան ու մյուս ՆԱՏՕ-ականներին նույն կերպ վարվելու մեզ հետ:

Սեփական երկրի ու ժողովրդի ճակատագիրը դումարի սեղանին չեն դնում: Մեզ պետք չեն դումարբազներ:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Եվրահայաստանն ու մեր քաղաքական ուժերի մաքսիմալիզմը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մայիսի 5-ին եւ 6-ին Երեւանում կայացած Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովն ու Հայաստան-ԵՄ համաժողովն իհարկե շարքային իրադարձություններ չէին եւ Հայաստանի սուբյեկտության տեսակետից կարեւոր էին՝ աշխարհի համար տեղեկատվական, ճանաչողական նշանակությամբ գոնե: Հրապարակված բազմակետ հռչակագրերն ու քննարկումների բացվածքը եթե ոչ գործնական, գոնե քաղաքակրթական առումով Հայաստանի գործոնության ու նախասկզբնական դերի հիշեցման հնարավորությունն էին, թեկուզեւ գագաթնաժողովը սոսկ եվրոպական միջոցառում էր:




Միայն այն, որ չորս տասնյակից ավելի եվրոպական պետությունների առաջին դեմքերը, գումարած Կանադայի, Մեծ Բրիտանիայի վարչապետերը, Ֆրանսիայի նախագահը, ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը, եվրոպական բոլոր կառույցների ղեկավարներն էին ժամանել, իսկ եվրոպական շատ պաշտոնյաների ելույթներում (Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի եւ անգամ Մեծ Բրիտանիայի վարչապետ Քիր Սթարմերի ելույթներում ներառյալ) ուղղակի եւ անուղղակի ակնարկներ կային Հայաստանի՝ քաղաքակրթական օրրաններից մեկը լինելու մասին, ինքնին Եվրոպա ձգտող Հայաստանի տարածաշրջանային եւ միջազգային կշռի ավելացման նպաստ էր, ինքնին Ադրբեջանին իր տեղը ցույց տալու, Ալիեւի վերջին ագրեսիվ պնդումները զրոյացնելու հանգամանք:

⇨8

## Շվեյցարական օրակարգում միշտ արդիական պահել Արցախի հարցը

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

Ապրիլի 30-ին «Ազգի» առցանց տարբերակում ծանուցել էինք նույն օրը ժամը 13-15-ին Շվեյցարիայի դաշնային ժողովի հատուկ նիստի մասին, որին մասնակցում էին շվեյցարացի 12 պատգամավոր, Բեռն ժամանած ԼՂ ներկայացուցիչները՝ Աշոտ Դանիելյանի գլխավորությամբ, ինչպես նաեւ ԼՂ հիմնարար իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող միջազգային իրավունքի մասնագետներ, քաղաքագետներ, Քրիստոնեական համերաշխություն միջազգային կազմակերպության(CSI) ներկայացուցիչներ: «Ազգում» ժամանակին գրել ենք, որ 2025-ի մարտի 18-ին Շվեյցարիայի դաշնային ժողովի վերին պալատը՝ Կանտոնների խորհուրդը, ընդունեց 24.4259 նախագիծը՝ «ԼՂ- ի համար Խաղաղության ֆորում. հայերի վերադարձի հնարավորության ապահովում» վերնագրով: 46 անդամներից 29-ը կողմ քվեարկեցին նախաձեռնությանը, որով օրենսդիրը հորդորում էր Շվեյցարիայի կառավարությանը մեկ տարվա ընթացքում հարթակ ապահովել ԼՂ-ի և Ադրբեջանի ներկայացուցիչների միջև երկխոսության համար: Նախաձեռնության հիմնական նպատակն է Արցախից բռնի տեղահանված հայ բնակչության անվտանգ, հավաքական և արժանապատիվ վերադարձն իրենց պատմական հայրենիք ապահովելը: Կանտոնների խորհրդի որոշումը հաջորդում էր Ազգային խորհրդի՝ խորհրդարանի ստորին պալատի նույն առաջարկի ընդունմանը, որը կայացել էր 2024 թ. դեկտեմբերի 17-ին: Երկու պալատների հավանությամբ 24.4259 նախագիծը ստացել է օրենքի ուժ: Մեկ տարի անց ֆորումը դեռ չի գումարվել: Ապրիլի 30-ին Բեռնում Դաշնային խորհրդարանում կայացած նիստի մասին ենք զրուցել դրան մասնակցած անձանց հետ: Մինչ այդ ներկայացնենք Շվեյցարիայի հանրային հեռարձակողի՝SRF-ի անդրադարձը Արցախի հարցին:

### Echo der Zeit -ի հաղորդումը

Մայիսի 1-ին ժամը 18-ին հեռարձակվող Echo der Zeit (թրգմ. «Ժամանակի արձագանքը») լրատվական թողարկման եթերում 5 րոպեանոց անդրադարձով խոսվեց «ԼՂ՝ խաղաղության սպասող հակամարտության» մասին՝ եթեր տրամադրելով Բեռն ժամանած Արցախի պատվիրակության ղեկավար ԱԺ նախագահ Աշոտ Դանիելյանին: Հեղինակ Էլմար Պլոցցան (Elmar Plozza) խոսքն այսպես սկսեց.

«ԼՂ-ն Կովկասում գտնվող հակամարտության տեղավայր է, որ դեռ սպասում է խաղաղության: 3 տարի է արդեն, ինչ Ադրբեջանը ռազմական ուժով գրավել է այն, այնտեղ ապրող հայերին տեղահանել: Այս շաբաթ Բեռն էր այցելել Արցախի վտարանդի ԱԺ նախագահը, որ Շվեյցարիայից սատարում էր խնդրում: Այս այցը ցույց տվեց նաեւ Շվեյցարիայի արտաքին քաղաքականության դիլեման»: Մայիսի 3-ին SRF կայքում տեղադրվեց նույն հեղինակի հաղորդման տեքստային տարբերակը:

⇨7

# Թուրք դեսպանների այցը Հայաստան

## Դեսպան Հասան Գյողուշ՝ «Բաքուն չպետք է Անկարա-Երեւան հարաբերությունների կարգավորմանը խոչընդոտի»

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Իրանում ՀՀ նախկին դեսպան

Եվրոպական քաղաքական համայնքի երեւանյան 8-րդ գագաթնաժողովին մասնակցելու նպատակով Թուրքիայի փոխնախագահ **Ջեւդեթ Յըլմազի** Հայաստան այցից օրեր առաջ, նույն օրերին «Երեւանյան երկխոսություն» միջազգային համաժողովին «տանտիրոջ իրավունքով» մասնակցող Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացում Թուրքիայի հատուկ ներկայացուցիչ դեսպան **Սերդար Քըլըչից** բացի, մեր մայրաքաղաքի փողոցներում իրենց տպավորություններն արձանագրելու համար շրջում էին նաեւ Թուրքիայի նախկին դեսպան **Հասան Գյողուշն** ու հանգստի կոչված երկու այլ թուրք դեսպաններ:

Փորձառու դիվանագետ Հասան Գյողուշը, որ նախկինում որպես դեսպան Թուրքիան ներկայացրել է Հնդկաստանում, Հունաստանում, Ավստրիայում եւ Պորտուգալիայում, զբաղեցրել է նաեւ Թուրքիայի արտաքին գործերի նախարարի տեղակալի պաշտոնը՝ համակարգելով ԵՄ-ի եւ եվրոպական երկրների հետ երկկողմ հարաբերությունները:

Նա, որպես քաղաքական վերլուծաբան, վերջերս գտնվել է Երեւանում՝ փորձելով հասկանալ հայաստանցիների վերաբերմունքը Թուրքիայի նկատմամբ, ներքաղաքական իրավիճակը եւ գործող վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** վերընտրվելու հնարավորությունները:

Թուրք դիվանագետի երեւանյան այցի մասին հոդվածով հանդես եկած իրանական «**Թեսնիմ**» կայքը նշում է, որ հաշվի առնելով անցյալում տեղի ունեցած պատմական իրադարձությունները, Անկարայի եւ Երեւանի միջեւ հարաբերությունների կարգավորումը դեռեւս դժվար իրագործելի է թվում: Գյողուշը հույս է հայտնում, որ Բաքուն չի խոչընդոտի Անկարա-Երեւան հարաբերությունների կարգավորմանը, շեշտը դնելով նաեւ փորձագիտական շրջանակներում տարածված այն տեսակետի վրա, որ առեւտրատնտեսական կապերի զարգացումը, զբոսաշրջությունը եւ մարդկային շփումները կարող են աստիճանաբար փոխել մթնոլորտը:

Կայքը անդրադառնում է երեք փորձառու թուրք դիվանագետների այցին, որոնք նպատակ ունեին տեղում ուսումնասիրել Հայաստանի սոցիալ-քաղաքական իրավիճակը եւ պաշտոնական դիրքորոշումներից դուրս ձեւավորել սեփական գնահատականները:

Հրապարակվել են հատվածներ դիվանագետի զեկույցից, որտեղ Հայոց Մեծ եղեռնի եւ Արցախի պատկանելության վերաբերյալ նրա արտահայտած տեսակետները համահունչ են Թուրքիայի պաշտոնական դիրքորոշումներին:

Հայաստանը Թուրքիայի համար միաժամանակ մերձավոր եւ հեռավոր հարեւան բնորոշող դեսպան Հասան Գյողուշի գնահատմամբ՝ 2025 թվականի օգոստոսի 8-ին Վաշինգտոնում Երեւանի եւ Բաքվի միջեւ ստորագրված փաստաթուղթը, որը վերաբերում է ղարաբաղյան հակամարտության ավարտին եւ Ադրբեջանի ու Նախիջեւանի միջեւ հաղորդակցական կապ ապահովելու նպատակով «Զանգեզուրյան» միջանցքի կարգավիճակի հստակեցմանը, պատմական նշանակություն ուներ:

Զեկույցի հեղինակը նշում է, որ հանգստի մեկնած իր գործընկերների՝ **Հասան Սարվաթ Օքտամի** եւ **Օմար Օնհունի** հետ երեք օրով այցելել է Երեւան: Ներկայացնելով գործընկերներին՝ դեսպան Գյողուշը հարկ է համարում հիշեցնել, որ Սարվաթ Օքտամը 1984 թվականին, Թեհրանում Թուրքիայի դեսպանատանը ծառայելիս, ենթարկվել է հարձակման երկու հայերի կողմից: Սակայն, ինչպես Օմարը եւ ինքը, Սարվաթ Օքտամը եւս ցանկանում էր մոտիկից տեսնել Երեւանը:

Չնայած պաշտոնաթող դեսպանների ուղեւորությունը զուտ զբոսաշրջային էր, նրանք հնարավորություն են ունեցել հանդիպելու ներկայումս պաշտոններ չզբաղեցնող հայ կարեւոր գործիչների հետ եւ գնահատելու հունիսի 7-ի ընտրություններից առաջ Երեւանում տիրող քաղաքական մթնոլորտը:

Ըստ զեկույցի, պաշտոնաթող դեսպանների հանդիպումների օրակարգը բավականին հագեցած է եղել: Նրանք հանդիպել են **Լեւոն Տեր-Պետրոսյանի** նախկին խորհրդական **Ժերար Լիպարիտյանի**, ՀՀ նախկին արտգործնախարար **Զոհրաբ Մնացականյանի**, Արցախի նախկին արտաքին գործերի նախարար **Կարեն Միրզոյանի** եւ թուրքահայ **Սամսոն Օզարարատի** հետ:

### Տարբերվող Հայաստան

Զբոսաշրջության անվան տակ Հայաստան այցելած պաշտոնաթող դեսպանների աչքին մեր մայրաքաղաքը բնավ էլ Թուրքիայում պատկերացվող հետամնաց, մութ ու մռայլ քաղաքը չէ: Նրանց խոսքով՝ խորհրդային տարիներին կառուցված շենքերը մինչեւ ուշ գիշեր լուսավորվում են, եւ Երեւանի ոչ մի թաղամասում չեն նկատել քանդման ենթակա հին շենքերին փոխարինող անկանոն կառուցապատում, ինչպես նաեւ գետնին նետված ծխախոտի մնացորդներ կամ փողոցներում թքող մարդկանց:

Թուրք այցելուները տպավորված են եղել նաեւ Երեւանի փողոցներում երթեւեկող թանկարժեք ավտոմեքենաներից: Նրանց ուշադրությունից չի վրիպել սրճարաններից օգտվող երիտասարդների մեծ թիվը, ինչպես նաեւ դեղատների ու սուպերմարկետների շուրջօրյա աշխատանքը:




Հանդիպումների արդյունքում հյուրերը եզրակացրել են, որ վերջին տարիներին Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել: Վկայակոչելով նախկին արտգործնախարար Մնացականյանի ներկայացրած տվյալները՝ նրանք նշում են, որ 2025 թվականին Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը գերազանցել է 3 միլիոնը:

Ըստ զեկույցի հեղինակ Հասան Գյողուշի՝ Մնացականյանը նաեւ նշել է, որ ռուսական եւ ուկրաինական ընկերությունները Հայաստանում ստեղծել են համատեղ ձեռնարկություններ, որոնք արտահանումներ են իրականացնում դեպի Եվրոպա՝ շրջանցելով պատժամիջոցների սահմանած սահմանափակումները:

### Հայերի եւ թուրքերի ընդհանրության մասին

Դեսպան Հասան Գյողուշի խոսքով՝ «Մեկ ազգ, երկու պետություն» արտահայտությունը հաճախ օգտագործվում է Ադրբեջանի եւ Թուրքիայի հարաբերությունները նկարագրելու համար: Նա մերժում է այն պնդումները, թե հույներն ու թուրքերը նմանություններ ունեն: Նշելով, որ երկու տարի ծառայել է որպես դեսպան Հունաստանում եւ հնարավորություն է ունեցել այցելելու նաեւ Ադրբեջան: Եվ ահա Հայաստան այցելելուց հետո, Գյողուշը եզրակացնում է, որ թուրքերի հետ ամենաշատ ընդհանրություններ ունեցող ազգը հայերն են:

Խոսելով այդ ընդհանրությունների մասին՝ նա անդրադառնում է նաեւ խոհանոցին՝ նշելով, որ Թուրքիայում յուրաքանչյուր քաղաք ունի իր առանձնահատուկ խոհանոցը, մինչդեռ Երեւանում կարելի է գտնել Թուրքիայի տարբեր շրջանների ուտեստներ: Նրա դիտարկմամբ՝ Երեւանի փողոցներում հանդիպած յուրաքանչյուր տասը հայից առնվազն երեքից չորսը կարողանում է խոսել թուրքերեն:

Ռեստորանում անցկացրած վերջին երեկոյի ընթացքում, երբ երեք թուրք դեսպանները Սամսոն Օզարարատի եւ Կարեն Միրզոյանի հետ նույն սեղանի շուրջ թուրքերեն էին զրուցում, նրանց է մոտեցել հարեւան սեղանի մոտ նստած մի տարեց տղամարդ՝ երիտասարդ աղջկա ուղեկցությամբ: Նա ներկայացել է որպես Ֆրանսիայում բնակվող հայկական սփյուռքի ներկայացուցիչ եւ նշել, որ ուրախ է լսել թուրքերեն խոսակցություն: Այնուհետեւ հարցրել է՝ արդյո՞ք բոլորը Թուրքիայում բնակվող հայեր են:

Զեկույցի հեղինակ Հասան Գյողուշի կարծիքով՝ նույնիսկ հայերը երբեմն դժվարանում են իրենց տարբերել թուրքերից:

### Ընտրություններ

Դեսպան Հասան Գյողուշի զեկույցում նշվում է, որ շուտով, հունիսի 7-ին, Հայաստանում կանցկացվեն խորհրդարանական ընտրություններ, սակայն նա առայժմ ընտրական ակտիվություն չի նկատում: Նրա խոսքով՝ եթե պատերին փակցված թեկնածուների մի քանի պաստառներ չլինեին, դժվար թե զգացվեր, որ մեկ ամսից երկրում ընտրություններ են սպասվում:

Նա նշում է, որ ընտրական մրցավազքը հիմնականում կընթանա վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորած «Քաղաքացիական պայմանագիր» եւ Սամվել Կարապետյանի «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների միջեւ՝ հիշեցնելով, որ Կարապետյանը ներկայումս գտնվում է տնային կալանքի տակ եւ մեղադրվում է իշխանության դեմ հեղաշրջում նախապատրաստելու մեջ:

Գյողուշի տվյալներով, Հայաստանում անցկացված հասարակական կարծիքի հարցումները ցույց են տալիս, որ Փաշինյանը առաջատար է՝ վայելելով մոտ 30 տոկոսի աջակցությունը: Միաժամանակ նա նշում է, որ շատ քաղաքացիներ տաքսիներում կամ ռեստորաններում խուսափում են հայտնել իրենց քաղաքական նախընտրությունները:

Ըստ Գյողուշի, հունիսի 7-ի ընտրությունները առաջինն են Երկրորդ Ղարաբաղյան պատերազմից հետո (հոդվածում հիշատակված չեն 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունները Գ. Ա.): Նա եզրակացնում է, որ այդ ընտրությունները մեծ նշանակություն կունենան, քանի որ դրանց արդյունքներից է կախված ոչ միայն Փաշինյանի քաղաքական ապագան, այլեւ Հայաստանի հետագա քաղաքական ուղղությունը:

### Ընտրությունների ընթացքի վրա արտաքին ուժերի հնարավոր ազդեցությունը, ըստ դեսպան Գյուղուշի

*«Երեւանում ԱՄՆ դեսպանատունն իր 1800 աշխատակիցներով աշխարհի ամենամեծ ԱՄՆ դեսպանատներից մեկն է: Սակայն ամերիկացիները Հայաստանում այնքան մեծ ազդեցություն չունեն, որքան ռուսները:*

*Փաշինյանը վերջերս Մոսկվա էր այցելել: Պուտինը մամուլի ասուլիսում հայտարարեց, որ Ռուսաստանը չի կարող լավ հարաբերություններ ունենալ Հայաստանի հետ, քանի դեռ ռուս ընկերները բանտարկված են Հայաստանում:*

*Մեզ հետ զրույցի ժամանակ մի հայ պաշտոնյա ասաց, որ այն, ինչ ռուսները մեկ դոլարով կարող են անել Հայաստանում, ԱՄՆ-ն չի կարող անել տասը դոլարով:*

*Պետք է նշել, որ եկեղեցին, որը միշտ հայկական քաղաքականության մեջ որոշակի կշիռ է ունեցել, նույնպես դրական կարծիք չունի Փաշինյանի մասին:*

*Երկրորդ Ղարաբաղյան պատերազմում Ադրբեջանի հաղթանակից հետո վեց օրվա ընթացքում 118,000 ղարաբաղցի հայ ներգաղթեցին Հայաստան: Ղարաբաղի հայերը դեռեւս Հայաստանի քաղաքացիություն չեն ստացել, հետեւաբար չեն կարող քվեարկել առաջիկա ընտրություններում: Նրանց միայն հող է հատկացվում՝ իրենց տները կառուցելու համար:*

*Ղարաբաղի հայերը դժգոհ են Փաշինյանից՝ համոզված լինելով, որ նա բավարար չափով չի աջակցել իրենց»:*

### Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ընթացքը, ըստ դեսպան Գյուղուշի

«Ցեղասպանության մասին պնդումները դարձել են հայ ազգային ինքնության կարեւոր բաղադրիչներից մեկը: 1915 թ. իրադարձությունները ցեղասպանություն չորակող քաղաքական գործիչը Հայաստանի քաղաքական կյանքում որեւէ շանս ունենալ չի կարող:

⇨4

*Հայաստանի Ազգային Ժողովի ընտրութիւններուն ընդառաջ*

# Հայ ժողովուրդին անսակարկելի պահանջները

## *Անկախ թէ ովքեր պիտի ըլլան նոր իշխանութիւնները*



**Դոկտ. ԱՐՇԱՒԻՐ ԿԵՕՆՃԵԱՆ**

Պետական բարձրագոյն` Member of the Order of Canada շքանշանակիր

Հազիւ թէ քանի մը շաբաթներ մնացած են մինչեւ Յունիսի 7-ը, երբ տեղի պիտի ունենան Հայաստանի Ազգային Ժողովի համապետական ընտրութիւնները: Անգամ մը եւս կը յիշեցնենք, թէ մեծ չափով այս ընտրութիւններու արդիւնքէն կախեալ է յառաջիկայ երկար տարիներուն համար, թէ մեր հայրենիքին եւ թէ հայաստանաբնակ, ինչպէս նաեւ Սփիւռքի հայութեան ազգային ճակատագիրը:

Սակայն հակառակ այս անգամուան ընտրութեանց անկիւնադարձային ըլլալուն, որոշ յուսախաբութեամբ է որ կը հետեւինք Հայաստանի մէջ ընտրարշաւի այս օրերուն, ընտրուելու յաւակնութիւն ունեցող որոշ հոսանքներու գործելակերպին, խօսելակերպին եւ խոստումներուն մէջ դրսեւորուած լրջութեան եւ յստակութեան պակասին եւ կամ տկարութեան: Յատկապէս, նուազագոյնը անյարմար է ներկայ վարչապետ **Նիկոլ Փաշինեանին** եւ իր որոշ գործակիցներուն «ընտրապտոյտներուն» ընթացքին, կրկնակի տարբեր ուտեստեղէններ ճաշակելով, կամ հրապարակներու վրայ թմբուկ նուագելով ժողովրդականութիւն շահելու փորձերը...

Նախորդ մեր յօդուածով արծարծեցինք անվիճելի կարեւորութիւն ունեցող հարցերէն մէկը հանդիսացող Հայաստան-Սփիւռք փոխադարձ յարաբերութեանց յստակացումը: Եզրակացուցինք, թէ Սփիւռքը իր առաւելութիւններով ու տկարութիւններով հանդերձ անբաժանելի եւ իրաւասու թանկագին մէկ մասնիկն է հայ ժողովուրդին: Հետեւաբար, անկախաբար Հայաստանի օրուան իշխանութեանց եւ յատկապէս յետընտրութեանց նոր իշխանութիւններուն նախասիրութիւններէն, այս վերջինները պարտաւոր են Սփիւռքին հետ վարուիլ այնպէս, ինչպէս պարտաւոր են վարուիլ հայ ժողովուրդի որեւէ մէկ ուրիշ հատուածին հետ: Չենք զարմանար, թէ իշխանութիւնները աճապարուած չեն հակազդելու այս դժուար վիճելի եւ կառուցողական առաջարկին:

Այս անգամ մեր յօդուածին նպատակն է բնորոշել գիտակից որեւէ հայու` նորընտրելի իշխանութիւններուն ուղղուած անսակարկելի միւս պահանջները, որպէսզի Յունիսի 7-ին քուէատուփին մօտեցող քաղաքացին արդարօրէն որոշէ իր քուէին արժանի խմբաւորումը:

**Պահանջ 1**: - *Այո, խաղաղութիւն պէտք է տիրէ Հայաստանի տարածքին վրայ:*

Առաջնահերթ է այս պահանջը որեւէ երկրի, մանաւանդ Հայաստանի համար: Կարեւոր է սակայն մատնանշել, թէ ներկայ եւ շուտով շրջանաւարտ իշխանութիւններուն հիմնական սխալը այն է, որ անոնք կ ուզեն համոզել թէ պէտք է այս պահանջը լրացնել մեկնելով բազմադարեան մեր թշնամիներուն նկատմամբ ամբողջական զինաթափութեան դիրքերէն, այսինքն «ի գին ամէն զիջողութեան»: Բացայայտօրէն անտրամաբանական եւ ազգաքանդ է այս` «մաֆիայի զոհի» դասական օրինակը հանդիսացող կեցուածքը, ուր այս վերջինը ի վերջոյ ամբողջովին անձնատուր եւ անզօր գերին կը դառնայ զինք յօշոտող անյագ մաֆիապետին: Այդպէս ալ է այսօր, *անյագօրէն պահանջող* Ատրպէյճանին եւ յաւերժօրէն *տեղի տուող* Հայաստանին փոխյարաբերութիւններուն անընդունելի վիճակը...:

Ակնյայտ իրականութիւնը այն է, թէ Հայաստանի առտու-գիշեր «Խաղաղութեան համաձայնագիր» ստորագրելու ջանքերուն հակառակ, Ատրպէյճանը ոչ իսկ դոյզն դրական պատասխան տուած է մինչեւ այսօր:

Ընդհակառակն, ան իր տարբեր խօսափողերով չի դադրիր համարձակիլ Սեւանը եւ Երեւանը Արեւմտեան Ատրպէյճան որակելէ: Իսկ անցեալ Օգոստոս 8-ի` առանց որեւէ երաշխիքի Թրամփի միջնորդութեամբ այլեւս հանրածանօթ` ուաշինկթընեան թատերական ներկայացման համազօր «Համաձայնագիրը» կը մշարունակէ մնալ ճիշդ այդ մակարդակին վրայ:

Նորընտրուող իշխանութիւններէն կը պահանջուի հետապնդել եւ իրականացնել *իսկական արդար եւ արժանապատիւ, երաշխիքներով եւ ինքնապաշտպանութեամբ ապահովուած, Հայաստանը տեւական խաղաղութեամբ օժտելու լուրջ աշխատանքը:*

**Պահանջ 2**: *Հայաստանի ներքին կեանքին մէջ պէտք է հաստատուի միջազգային մակարդակով մարդու խօսքի եւ իրաւունքներու ազատութեան եւ ռամկավարական սկզբունքներու բծախնդիր գործադրութեան անվիճելի դրութիւնը:*

Ութ տարիներ առաջ, երբ «թաւշեայ յեղափոխութիւն» անուան տակ ձեւակերպուեցան այսօրուան իշխանութիւնները, անոնք ժամանակի մը համար վայելեցին համաժողովրդային համակրանք, որովհետեւ Հայաստանի ժողովուրդին կը խոստանային ճիշդ այդ սկզբունքները բծախնդրօրէն գործադրել: Այսօր, ութ տարիներ ետք, կացութիւնը ոչ թէ վերադարձած է նախորդ շրջանին տեղի ունեցող կարգ մը այլանդակութեանց, այլ նաեւ աւելին` հիմա Հայ ժողովուրդի դարաւոր սրբութիւնները ոտնակոխ ընելու անամօթ, հիւանդագին եւ կոպիտ գործելակերպն է որ կը տիրէ:

Առաւել եւս, ժողովուրդը ամէն օր ենթարկուած է արդարադատութեան եւ օրինական կարգ ու սարքի կամայական եւ քմահաճ գործադրութեան զզուելի գործելակերպին:

Սովորական երեւոյթ դարձած է իշխանութեան քմահաճ դրդումով, իրենց անհաճոյ նկատած որեւէ անհատ կամ խումբ «կալանաւորելու» եւ ամիսներով կալանքի տակ պահելու, յետոյ ազատ արձակելու, եւ յետոյ կրկին «կալանաւորելու» անհաւատալիօրէն քմահաճ գործելակերպը:

Եկեղեցական բարձրաստիճան հոգեւորականներ, իրենց բացառիկ բարերարութեամբ` յարգուած գործարարներ, կամ երիտասարդ համարձակ կարծիք յայտնող քաղաքացիներ, ամէն օր կ՚ենթարկուին այս կոպիտ, անքաղաքիրթ, անընդունելի վերաբերմունքին:

*Նորընտրուող իշխանութիւններէն կը պահանջուի անմիջապէս դադրեցնել այս դիկտատորական գործելակերպը եւ ազատ արձակել այս կարգի բոլոր «կալանաւորները»:*

**Պահանջ 3:-** *Վերահաստատել Հայ ժողովուրդին հոգեւոր եւ ազգային բոլոր սրբութիւններու նկատմամբ յարգանքն ու ակնածանքը*: Այստեղ պէտք է յատուկ կարեւորութեամբ յիշուին հետեւեալ կարեւորագոյն ստորաբաժանումները:

ա.- *Հայաստանեայց Առաքելական բազմադարեան Եկեղեցւոյ նկատմամբ կը պահանջուի վերահաստատել ամբողջական յարգանք*: Նորընտրուած իշխանութիւնները պարտին անմիջապէս դադրեցնել ժամանակէ մը ի վեր ներկայ իշխանութեանց ` Հ.Ա. Եկեղեցւոյ հոգեւորականներուն, Մայր Աթոռ Ս.Էջմիածնայ եւ Ամենայն Հայոց ազգընտիր Հայրապետին նկատմամբ որդեգրած անօրէն վերաբերմունքը:

Անընդունելի է իշխանութեանց կողմէ որեւէ կերպով միջամուխ ըլլալ Հ.Ա.Ե. ներքին գործունէութեան: *Սահմանադրականօրէն եւ դարաւոր մեր աւանդութեանց ոյժով հաստատուած այս անսակարկելի գործելակերպը պէտք է անմիջապէս որդեգրուի նոր իշխանութեանց կողմէ:*

բ.- Ոչ մէկ հայկական իշխանութիւն կրնայ հրաժարիլ Ցեղասպանութեան պահանջատիրութեան պարտականութենէն:

*Հայոց Ցեղասպանութեան պահանջատիրութիւնը անսակարկելի եւ անփոփոխելի պարտականութիւնն է հայ պետականութիւնը ներկայացնող բոլոր ժամանակներու իշխանութեանց համար:*

գ.- Յաւիտենական Արարատ լեռը անփոփոխելի եւ անսակարկելի պատմական խորհրդանիշն է Հայաստանին ու հայ ժողովուրդին: Անոր հայկական աշխարհին հոգեկան պատկանելիութիւնը սակարկութեան առարկայ դարձնելը ամօթալի արարք մըն է պարզապէս: *Կը պահանջուի Արարատը վերադարձնել իր պատուոյ տեղը ազգային խորհրդանիշներուն եւ սրտերուն մէջ:*

դ.- «*Արցախը մերն է*» ըսաւ Հայ ժողովուրդը ամբողջ երեսուն տարիներ իր քաղաքական, գրական, կրթական եւ բոլոր այլ հարթակներուն վրայ: Անհաւատալի խեղճութեան դրսեւորում է, մեր դարաւոր պատմութեան մէջ արձանագրուած այս իրականութիւնը հարցականի տակ դնելը:

*Գիտակցելով հանդերձ դժբախտաբար տակաւին ինքնապաշտպանութեան մեր այսօրուան տկարութեան, կարելի չէ վաճառքի հանել պատմական իրականութիւնները: Անձնատուութիւնը երբեք լուծում մը չէ... Նորընտիր իշխանութիւններէն կը պահանջուի իրատես ըլլալ ու երբեք չդաւաճանել մեր պատմութեան:*

**Պահանջ 4 եւ վերջինը:**

Նորընտիր իշխանութիւններէն մեր վերջին պահանջը, որ նաեւ միւս բոլորին իրականացման անվիճելի հաւաստիքը կը ներկայացնէ, *վերականգնումն է Հայաստանի ինքնապաշտպանութեան ազդու եւ արդիական միջոցներուն, որպէս առաջնահերթութեանց մէջ առաջինը:* Նախ շեշտենք, որ Հայաստանը ունի պահանջուած բոլոր միջոցները որպէսզի ինքնապաշտպանութեան իմաստով իր ռազմական կարողութիւնը հասցնէ արդիական բարձրագոյն մակարդակի: Այս մասին քանիցս մանրամասնօրէն գրած ըլլալով` աւելորդ կը գտնենք անգամ մը եւս այստեղ ներկայացնել այս իրականութիւնը առարկայական պատճառաբանուած տուեալներով հաստատող փաստարկումը:

*Անհրաժեշտ է վճռականօրէն կրկնել, թէ առանց բարձրագոյն մակարդակով ինքնապաշտպանութիւն ապահովելու, մնացեալ` վերեւը մեր նշած բոլոր արդար պահանջներու իրականացումը կը մնայ իտէալիստական ռոմանթիք երազի մակարդակին վրայ:*

Ալիեւին համար մեր Հայաստանը մինչեւ օրս իր «Արեւմտեան Ատրպէյճանն» է...: Իսկ Եւրոմիութեան կամ Թրամփի Ամերիկայի համար մեր բազմադարեան թանկագին հայրենիքը, պարզ, անցողակի հետաքրքրութեան նոյնքան ալ դիւրաւ մոռցուելիք մանրամասնութիւն մըն է ընդամէնը:

Պիտի եզրակացնե՛նք յստակ կերպով յայտարարելով, թէ Հայաստանի համապետական ընտրութիւններուն առնչութեամբ մենք յատուկ` ի սկզբանէ որեւէ թեկնածուի կամ քաղաքական խմբաւորումի նկատմամբ համակրանքով կամ հակակրանքով չենք ուզեր մօտենալ:

*Սակայն անվիճելի իրականութիւն է, որ Հայ ժողովուրդի անշահախնդիր եւ գերազանցօրէն գիտակից մասին մեծամասնութեան համակրանքը եւ զօրավիգը ուղղուած է դէպի այն եզակի կամ յոգնակի թեկնածուին կամ խմբաւորումին, որ կը խոստանայ իր բոլոր միջոցներով ջանալ ապահովել այս յօդուածով բնորոշուած վերոյիշեալ անսակարկելի պահանջներուն իրագործումը*:

Ի դէպ, ուշադրութեամբ կը հետեւինք հետզհետէ սաստկացող ներկայ ընտրարշաւին մէջ դրսեւորուող առարկայական զարգացումներուն: Արդէն իսկ ակնյայտ եւ տպաւորիչ են գլխաւոր խմբաւորումներէն` մանաւանդ Սամուէլ Կարապետեանի գլխաւորած եւ հսկայական հետեւողութիւն ապահոված` «Ուժեղ Հայաստանի» եւ բազմահազար մասնակիցներով ծովածաւալ` ջահերթ գլխաւորած` «Հյայաստան Դաշինքի» վայելած ժողովրդականութիւնը: Անոնք նաեւ ակնյայտօրէն ջատագով են մեր վերեւը թուած «պահանջներուն» իրականացման:

*Հետեւաբար այս պայմաններու տակ որոշապէս մաղթելի է, որ միւս խմբաւորումները եւս, եւ մանաւանդ ՔՊ-ական շարժման մէջ եւս, դուրս գան ողջմիտ հայրենասիրութեան հետեւորդներու մեծ խումբեր եւ բոլորը միացնեն իրենց ոյժերը, որպէսզի նորընտիր իշխանութիւնները վայելեն ամբողջ հայ ժողովուրդին, ներառեալ ամբողջ Սփիւռքին զօրավիգը:*

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Միքայել Թաբոյան. Ֆրանսիական հումոր՝ հայկական շեշտադրությամբ

*__ԵՐԵՎԱՆ-ՎԱԼԱՆՍ, Ֆրանսիա__ - Հայազգի ֆրանսիական դերասան __Միքայել Թաբոյանը__ (ծնվ. 1982) հարուստ փորձ ունի կինոյում, հեռուստատեսությունում եւ թատրոնում: Ուսանել է Մոնպելյեի կոնսերվատորիայում եւ մասնակցել դերասանական արվեստի մասնագիտական դասընթացների: Մոնպելյեում ստացել է նաեւ սոցիոլոգիայի մագիստրոսի աստիճան: Կարիերայի սկզբում աշխատել է «Գազոլին» թատերախմբում՝ մասնակցելով դասական ու ժամանակակից բեմադրությունների: Հանդես է եկել մի շարք ֆիլմերում՝ «Հրեշտակներ եւ ընկ.» (2024), «Երբեք առանց իմ հոգեբանի» (2023), «10 օր մայրիկի» (2022), «12-ի գիշերը» (2021): Հեռուստատեսությունում ծանոթ է «Էքստրա» (2023) եւ «Այնպիսի մեծ արև» (2022) սերիալներից: Թատրոնում աչքի է ընկել «Սեքսն առաջին էջում» (2023-2026) եւ «Ճղճղանների թագուհին» (2024-2026) ներկայացումներում, ինչպես նաեւ շրջագայել է իր հեղինակած «Ես Ալցեստն եմ» մենաներկայացմամբ (2023-2024): 2020-2025 թթ. համահեղինակել եւ ներկայացրել է «#ELP» պարային-դրամատիկական ստեղծագործությունը՝ նվիրված դպրոցական հալածանքներին:*



**-Միքայե՛լ, ֆրանսիական հումորն իր առանձնահատուկ ավանդույթներն ունի: Ձեզ համար ինչպիսի՞ն է անցյալ սերնդի ազդեցությունը, թե՞ ձեր ոճը ձեւավորվել է այլ գործոններից:**

-Երիտասարդությանս տարիներին հաճախ էի լինում գրադարանում՝ կարդալով ֆրանսիացի երգիծաբանների ստեղծագործությունները: Այսպես ձեւավորվեց իմ կատակերգության մշակույթի հիմքը: Մասնավորապես ինձ վրա մեծ ազդեցություն ունեցավ Պիեռ Դեսպրոժը: Նրա գրական ոճը՝ աբսուրդի եւ սեւ հումորի համատեղմամբ, ինձ սովորեցրեց, որ կարելի է մարդկանց ծիծաղեցնել՝ մնալով վայելուչ ու ողջախոհ: Նրա գրական մակարդակը երկար ժամանակ ինձ ափիբերան էր պահում, քանի որ հաճախ մտածում էի՝ իսկ ես կարո՞ղ եմ հասնել այդ չափանիշներին: Սակայն այժմ կարծես կարողանում եմ հեռանալ այդ համեմատությունից եւ գտնել իմ սեփական ոճը:

**-Ինչպե՞ս է պարն ազդել ձեր արվեստի եւ կյանքի վրա:**

Պարից առավել ինձ հետաքրքրում է հարաբերությունը մարմնի հետ, որին վերաբերվել եմ իբրեւ դերասան (եւ այսօր՝ որպես կատակերգու): Բացահայտեցի, որ հույզը կամ ծիծաղը հաճախ փոխանցվում են մարմնի լեզվով: Երբ դեռ ուսանող էի, մի տեսակ «փակվածություն» էի զգում այդ ոլորտում, ուստի մասնակցեցի ժամանակակից պարային մի քանի աշխատանոցների՝ բացվելու եւ ճկունություն ձեռք բերելու համար: Ես պրոֆեսիոնալ իմաստով պարող չեմ, բայց այդ փորձը շատ նպաստեց իմ մասնագիտական աճին:

**-Դուք երրորդ սերնդի հայ եք: Ի՞նչ գիտեք ձեր ընտանիքի ու նախնիների մասին:**

-Նախ պետք է նշեմ, որ ծնողներս ինձ ոչինչ չեն պատմել նախնիներիս մասին: Իրենք էլ քիչ գիտեն իրենց ընտանիքի պատմության մասին, ուստիեւ ստիպված էի ինքնուրույն հետաքննություններ կատարել: Արդյունքում պարզվեց, որ Թաբոյան (կամ Թեբոյան) ընտանիքը եղել է Խարբերդից, 1915 թվականի ցեղասպանությունից հետո արտագաղթել է Ֆրանսիա: Նախ հաստատվել են Օբենա քաղաքում, քանի որ այնտեղ աշխատանք կար եւ կապ տեղի բողոքականների հետ: Պապս՝ Արմենակը, մասնակցել է Երկրորդ համաշխարհային պատերազմին՝ ֆրանսիական բանակի կազմում եւ զոհվել է հանուն Ֆրանսիայի: Հայրս՝ Գաբրիելը, որը ծնվել էր Ֆրանսիայում, հազիվ է ճանաչել նրան եւ իմ երկրորդ անունը դրել է Արմենակ: Մայրս՝ ծնունդով Աբելյան, իմ կարծիքով, ծագում է նույն տարածաշրջանից, ինչ Թաբոյանները:

**-Ի՞նչ ես կարծում, հայկական բնորոշ որեւէ բան կա՞ քո հումորի կամ դերասանական ոճի մեջ:**

Կարծում եմ, դրանք շատ փոխկապակցված են: Ինձ բնորոշ փոքրիկ առանձնահատկությունն այն է, որ ես հաճախ իմ անձնական դժվարությունները վերածում եմ երգիծական արվեստի, հույզերս արտահայտում եմ՝ հաճախ կատակով, ինքնահեգնանքով կամ ինքնաերգիծմամբ: Այս թերությունն արտացոլվում է իմ ինչպես դերասանական, այնպես էլ հումորային աշխատանքներում, եւ նույնիսկ կյանքում:

**- Հայկական ժառանգության ո՞ր կողմերն են ձեզ առավել հետաքրքրում: Լեզո՞ւն, մշակո՞ւյթը...**

-Շատ եմ ամաչում, որ չեմ խոսում հայերեն: Հայրս ինձ սովորեցրել է մի քանի բառ, բայց երբեք չուզեց ամբողջովին սովորեցնել, չնայած գերազանց տիրապետում էր: Շատ եմ հետաքրքրվում հայկական մշակույթի հազարամյա պատմությամբ, երաժշտությամբ (դուդուկով), խոհանոցով եւ ցավը հաղթահարելու կարողությամբ:

**-Ունե՞ք կապեր հայ համայնքի հետ:**

-Ես ծնունդով Վալանսից եմ, որտեղ շատ մեծ հայկական համայնք կա: Հասկացա, որ հետաքրքրված եմ հայկական միջավայրով, երբ խաղում էի քաղաքի ֆուտբոլային ակումբում, որը ստեղծել էին հայերը: Մասնակցել եմ հայերի կազմակերպած դաշտահանդեսներին (*այս բառը Միքայելն ասաց հայերեն - Ա. Բ.*), հաճախել եմ Հոմենեթմենի մշակութային միջոցառումներին: Հայաստան դեռեւս չեմ այցելել, բայց ծրագրում եմ շուտով գալ...

# Արամ Անտոնյանի «Մեծ Ոճիրը»՝ անգլերեն




Գրող, հրապարակախոս **Արամ Անտոնյանի** (1881-1952) Բոստոնում 1921 թվին լույս տեսած հայերեն հայտնի «**Մեծ ոճիրը**» գիրքը, ըստ «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթի անգլերեն վերամշակված տարբերակով այսուհետ հասանելի կլինի օտարալեզու ընթերցողներին: Գիրքը պատմական առանձնահատուկ նշանակություն ունի ոչ միայն փաստաթղթերի հավաքածու լինելու, այլեւ սկզբնաղբյուրային վկայություն լինելու հանգամանքով, քանի որ պարունակում է հայերին տարագրելու եւ բնաջնջելու պետական պաշտոնական ձեռագիր հրամաններ՝ ըստ օսմանյան պաշտոնյա **Նայիմ Էֆենդու** հուշերի: 1983-ին Թուրքիայի կառավարությունը փորձել է արժեզրկել Անտոնյանի այս աշխատությունը, պնդելով, որ Նայիմ անունով պաշտոնյա չի եղել, ուստի նրա հուշագրությունը կեղծ է եւ հորինված՝ հայերի կողմից: Միայն 2018-ին է, որ դոկտ. **Թաներ Աքչամի** «Սպանության հրամաններ» հատորի հրատարակությամբ Անտոնյան-Նայիմ փաստաթղթային հուշագրությունը վերարժեւորվել է որպես Հայոց ցեղասպանության ուսումնասիրության պարտադիր սկզբնաղբյուրի:

Գրքի անգլերեն նոր հրատարակման առաջաբանն ու ուղեկցող հավելվածը գրել է դոկտ. Թաներ Աքչամը, որ ներկա է լինելու մայիսի 11-ին Գլենդեյլի կենտրոնական գրադարանում նախատեսված հանդիսավոր շնորհանդեսին: Ներկա է լինելու նաեւ Գլենդեյլի քաղաքապետ Արտի Քասախյանը:

Արամ Անտոնյանը ծնվել է Կոստանդնուպոլսում: Նախնական կրթությունը ստացել է Սկյուտարի հայկական դպրոցում, ապա ուսումը շարունակել է «Ֆրերների» ֆրանսիական վարժարանում: Կազմել է հայ գրականության դասագրքեր «Գանձարան» խորագրով: Խմբագրել է «Ծաղիկ» եւ «Լույս» գրական-գեղարվեստական շաբաթաթերթերը: Կյանքի վերջին տարիներին աշխատել է որպես տնօրեն Փարիզի Նուպարյան ազգային մատենադարանի:

Պատրաստեց՝ ՀԱԿՈԲ ՇՈՒԼԻԿՅԱՆԸ

# Թուրք դեսպանների այցը Հայաստան

➩2 Փաշինյանը, ճիշտ ընտրություն կատարելով, դադարեցրել է այս պնդումների ակտիվ բարձրաձայնումը միջազգային ասպարեզում եւ սկսել է Թուրքիայի հետ հարաբերությունների անվերապահ կարգավորման գործընթաց:

Մի երկրում, որտեղ հակաթուրքական տրամադրությունները շուրջ 100 տարի բորբոքված են, դա (ցեղասպանության ուրացումը Գ.Ա.) խոշորածավալ պատերազմում պարտություն կրած առաջնորդի համար շատ համարձակ քայլ է:

Այնուամենայնիվ, հայերը դժգոհ են Թուրքիայից, թեեւ այդ մասին չեն բարձրաձայնում: Նրանք դժգոհ են, որ տարեսկզբին Թուրքիայի խոստացած Ալիջանի սահմանային անցակետի բացումը դեռ իրականություն չի դարձել:

Նրանք կարծում են, որ ընտրություններին նախորդող մեկ ամսվա ընթացքում Փաշինյանին Թուրքիայի կողմից ցուցաբերվող բացահայտ աջակցությունը հակառակ արդյունքը կունենա: Սակայն հայաստանցիները ակնկալում են որոշակի կոնկրետ քայլեր հարաբերությունների կարգավորմանը նպաստելու համար:

Առայժմ կարգավորման ամենամեծ խոչընդոտը Հայաստանի 1991 թվականի սահմանադրությունն է: Սահմանադրությունը չի հիշատակում ցեղասպանությունը, բայց սահմանադրության նախաբանում տեղ գտած Անկախության հռչակագիրը 1915 թվականի իրադարձությունները սահմանում է որպես ցեղասպանություն:

Սահմանադրության 11-րդ հոդվածը նաեւ Արեւելյան եւ Հարավարեւելյան Թուրքիայի որոշ շրջաններ անվանում է Արեւմտյան Հայաստան:

Փաշինյանը եւս մեկ համարձակ քայլ է կատարել՝ ասելով, որ սահմանադրության այս խնդրահարույց հոդվածները պետք է փոխվեն: Սակայն նա չի կարող դա անել ընտրություններից առաջ:

Հիշեցնեմ 1800-ական թվականներին Անգլիայի նախկին վարչապետ լորդ Փալմերսթոնի խոսքերը. «Անգլիան չունի մշտական դաշնակիցներ կամ հավերժական թշնամիներ, Անգլիայի շահերը մշտական են եւ հավերժական»:

Ինչպես Հայաստանի, այնպես էլ Թուրքիայի շահերը պահանջում են երկու երկրների միջեւ հարաբերությունների կարգավորում: Պետությունները զգացմունքային էակներ չեն: Օրինակ՝ Ադրբեջանը Թուրքիայի մտերիմ բարեկամն է, միեւնույն ժամանակ՝ Իսրայելի հիմնական դաշնակիցներից մեկը: Եվ չնայած Իսրայելը ժամանակակից պատմության մեջ խոշորագույն ցեղասպանություններից մեկն է իրագործել, այնուամենայնիվ Թուրքիան չի խանգարում Բաքու-Թել Ավիվ հարաբերություններին:

Նույն տրամաբանությամբ էլ Բաքուն չպետք է խոչընդոտի Անկարա-Երեւան հարաբերությունների կարգավորմանը»:

# Երկու կարծիք Վարդան Աճեմյանի «Սուրբ Տրդատ» օպերայի մասին

*Ապրիլի 27-ին լրացավ ՀՀ Պետական մրցանակի դափնեկիր, արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Վարդան Աճեմյանի 70-ամյա հոբելյանը: Այդ առթիվ շնորհավորելով ճանաչված արվեստագետին եւ մաղթելով ստեղծագործական նոր նվաճումներ՝ հրատարակում ենք արվեստաբաններ **Մարգարիտա Ռուխկյանի** եւ **Սիրանույշ Գալստյանի** հոդվածներն Աճեմյանի «Սուրբ Տրդատ» օպերայի մասին:*



Հայ երաժշտական արվեստը համալրվել է բարոյական հզոր ուժ ունեցող ստեղծագործությամբ՝ մեծ օպերայով, որը գրել է հայտնի կոմպոզիտոր Վարդան Աճեմյանը: Նրա հաջողությունները կոմպոզիցիայում՝ սիմֆոնիկ ու երգչախմբային ստեղծագործությունները, գործիքային համերգները, «Կիկոսի մահը» օպերան՝ ըստ Հովհաննես Թումանյանի համանուն գործի, բազմաթիվ ռոմանսները՝ հայ բանաստեղծների երկերի հիման վրա, այս ամենը նախանշում էին, որ ստեղծվելու է նման հզոր նշանակության գործ:

Օպերայի թեմային իրեն որոշակիորեն հանգեցրել է ցավը հանուն Հայրենիքի, որն արդեն որքան ժամանակ է, ապրում է իր պատմության ողբերգական էջերը:

Քրիստոնեության ծագման պատմությունը հայ ժողովրդի գոյության եւ կյանքի առանցքային թեման է: Այն բացահայտում է նրա բնավորության առանձնահատկությունները, սկսած սեփական ինքնության գիտակցման պահից, երբ հայ ժողովուրդը ձգտում էր իրեն միավորող հավատ ձեռք բերել: Հենց դա էր, որ ուղի հարթեց քրիստոնեության լուսավոր եւ կենսահաստատող գաղափարների ձեռքբերման համար:

Օպերայի ստեղծման համար տարվող աշխատանքը կոմպոզիտորի համար փրկություն դարձավ սեփական ապրումներից ու տառապանքներից: Իսկ նրա տաղանդը բազմապատկեց այն մետաֆիզիկ ուժերը, որ ուղղված են ունկնդիրների եւ հանդիսատեսի լայն շրջանակին: Օպերայի երաժշտությունը հիանալի է, հագեցած մեղեդայնությամբ, երգեցիկությամբ, հարմոնիաներով, որոնք ստեղծում են առ լույս, ուրախություն եւ հավատի ձեռքբերման ձգտող համաժողովրդական մեծ ներշնչանքի մթնոլորտ:

Երեք մեծ արարները եւ ութ պատկերները ժողովրդական սպասման տեսանկյունից են բացահայտում Մեսիայի առաջին ավետաբերի մասին սյուժեն: Եթե ժողովուրդն սպասում է, ապա այն անպայման կիրականանա:

«Սուրբ Տրդատ» օպերայի վրա կատարված աշխատանքն ընթացել է լիբրետիստի հետ սերտ համագործակցությամբ, որը նույնպես տոգորված էր այս հոյակապ թեմայով: Եվ այս օպերայի բեմադրման իրագործումը նույնպես կպահանջի բեմադրիչների ամբողջ թիմի՝ ռեժիսորի, դիրիժորի, նկարիչների եւ արտիստների ստեղծագործական եւ գաղափարական լիակատար փոխըմբռնում:

Վարդան Աճեմյանի «Սուրբ Տրդատ» օպերայի բեմադրությունը կարող է հասարակական մեծ նշանակություն ունեցող երեւույթ դառնալ:

**ՄԱՐԳԱՐԻՏԱ ՌՈՒԽԿՅԱՆ**
**Արվեստագիտության դոկտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ**

Արդի հայտնի կոմպոզիտոր Վարդան Աճեմյանի «Սուրբ Տրդատ» օպերան նվիրված է հայ ժողովրդի պատմության ամենաառանցքային թեմային՝ քրիստոնեության ընդունմանը: Այդ օրերից ի վեր քրիստոնեությունը դարձել է հայ ժողովրդի մշակույթի, հայի ինքնության կարեւորագույն դիմագիծը, որով նա ներկայացել ու ներկայանում է աշխարհին:

Վերջին ժամանակներում մեզ պատուհասած արհավիրքներից հետո դժվար էր պատկերացնել, որ մեր Հայրենիքում կարող է ծնվել այսպիսի կենսահաստատ մասշտաբային գործ, որն ապշեցնում է ոչ միայն հզոր թափով, այլեւ իր վեհացնող մեղեդայնությամբ ու լավատեսությամբ: Գլխավոր եւ երկրորդ պլանի հերոսների արիաների, երգչախմբի, պարային կտորների գործիքային համադրումը կարծես վերածվում է հոգեւոր ցնծության: Արվեստագետի սխրանքը գուցե հենց դրանում է կայանում, որ վերջինս կարողանա «քաոսից ներդաշնակություն արարել», ինչպես կասեր բանաստեղծ Ալեքսանդր Բլոկը:

Անկախության տարիների թերեւս ամենատպավորիչ ներկայացումից՝ Գաետանո Դոնիցետիի «Պոլիկտոսի» բեմադրումից (ռեժիսոր՝ Տիգրան Լեւոնյան) հետո հայ օպերային բեմն այս գործով կարող է հիացնել ու զարմացնել թե՛ մեր, եւ թե՛ օտար հանդիսատեսին, այս անգամ արդեն հայ կոմպոզիտորի ստեղծագործությամբ, որն ունի բացառապես հայեցի պատմական նյութի վրա հիմնված լիբրետո: «Սուրբ Տրդատ» օպերան կարող է ընկալվել նաեւ իբրեւ մեր պատմական առաքելության հիշեցում:

Այսպիսով, ժամանակակից հայ դասական երաժշտական արվեստը Վարդան Աճեմյանի շնորհիվ հարստացել է մոնումենտալ՝ խոշորակերտ մի երկով, որն ունի համամարդկային եւ բացառիկ հոգեւոր բովանդակություն: Իսկ այդպիսի ստեղծագործության մեծադիր բեմադրությունը կարող է վերածվել համահայկական մշակութային խոշոր իրադարձության եւ համազգային վերելքի ազդարար դառնալ: Հուսանք, որ այն շուտով իրականություն կդառնա՝ զարդարելով ազգային օպերային արվեստը մեր օրերում:

**ՍԻՐԱՆՈՒՅՇ ԳԱԼՍՏՅԱՆ**
**Արվեստագիտության թեկնածու, դոցենտ**

## «Ղրիմի հայերը» ցուցահանդեսը Բելոգորսկում

Ապրիլի 22-ին Բելոգորսկի շրջանի պատմաերկրագիտական թանգարանում տեղի ունեցավ «Ղրիմի հայերը» խորագրով ցուցահանդեսի բացումը՝ նվիրված Օսմանյան կայսրությունում 1915 թ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան եւ անցկացվող Ռուսաստանի ժողովուրդների միասնության տարվա շրջանակում:

Ցուցահանդեսում ներկայացված է ավելի քան 50 ցուցանմուշ Ղրիմի ազգագրական թանգարանի հավաքածուից, որոնք բնութագրում են հայ ժողովրդի նյութական ու հոգեւոր մշակույթը: Ներկայացված են Ղրիմի կրոնական կառույցների եւ խաչքարերի լուսանկարներ, պղնձե սպասքի հավաքածու, զարդեր, ավանդական հագուստ եւ երաժշտական գործիքներ:

Բացման խոսքով հանդես է եկել Ղրիմի ազգագրական թանգարանի տնօրեն **Յուրի Լապտեւը**, որն ընդգծել է ցուցահանդեսի կարեւորությունը հայ ժողովրդի պատմության եւ մշակույթի պահպանման, ինչպես նաեւ թանգարանային հավաքածուի արժեքը՝ որպես հայկական ժառանգության արտահայտություն:

Պատմական «Ղրիմի հայեր» ակումբի ղեկավար, հայ մշակույթի ազգագրական կենտրոնի հիմնադիր **Թիմուր Յանը** թանգարանին է նվիրել իր եւ **Տաթեւիկ Սարգսյանի** աշխատասիրած «Մինաս Կարայանի հուշերը. «Ղրիմի հայերը» ռուսերեն գիրքը եւ Կարասուբազար (այժմ՝ Բելոգորսկ) քաղաքի հայերի կյանքին նվիրված եզակի լուսանկարներ: Երաժշտական նվեր է մատուցել **Մետաքսի Հովհաննիսյանը**, որը կատարել է մի քանի երգ հայոց լեզվով:




Ցուցահանդեսի բացմանը մասնակցել են Բելոգորսկի շրջանի մշակութային հաստատությունների ղեկավարներ եւ աշխատակիցներ, շրջանային խորհրդի ներկայացուցիչներ, հայ համայնքի ներկայացուցիչներ եւ քաղաքի բնակիչներ:

Ցուցահանդեսը կգործի մինչեւ 2026 թվականի հուլիսի 23-ը:

**Ա. Բ.**

## «Եթե + Հպում 2»

Ապրիլի 14-23-ին Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնում կայացավ Հասմիկ Ավետիսյանի «Եթե + Հպում 2» ցուցահանդեսի բացումը:

Ցուցադրությունն արվեստագետի համանուն շարքերի միաձուլումն է, որը հիմնվելով նրա նախկին աշխատանքների վրա՝ նորովի է ներկայանում դիտողին: Նախագծի առանցքային մաս են հանդիսանում իրար «թիկունք կանգնած» կնոջ եւ տղամարդու ընդհանրական դիմաքանդակները, մինչ ցուցադրված կտավներն ու կոլաժային՝ չափերով փոքր քանդակներն ամբողջացնում են ցուցադրության բովանդակությունը:

Սրահում, մուտքից ձախ երկու ծավալային մարմնական դիմաքանդակներ են, որոնք մուտքից աջ տեղադրված թափանցիկ քանդակների կաղապարներն են: Արվեստագետի օգտագործած նյութերի շնորհիվ (գիպս, պլաստիկ, բետոն եւ այլն) այդ թափանցիկ քանդակները ցույց են տալիս մարմնականների մտային դաշտը: Նրանց մտքերը հաճախ խաչվում են, հաճախ՝ հակասում իրար, կարծրանում են ու վահան դառնում, փակվում են ու ներսից նայում աշխարհին: Ֆիգուրների այս մտային հարաբերություններն առնչվում են սիրո, գիտակցության բարձր մակարդակների, ներքին հոգեկան կոնֆլիկտների, անգամ՝ առօրյա կյանքի բարդությունների հետ: Այդ հարուստ հուզական ֆոնին նրանց դիմագծերում պահպանվում է այն հանգստությունը, որով նրանք ներկայանում են աշխարհին:




**ՀՐԱՉՅԱ ԳԱԼՍՏՅԱՆ**

# Իրանի դեմ պատերազմը նոր փուլ է թեւակոխում

ՍՈՒՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
Միջազգայնագետ, ԱՄՆ արտաքին քաղաքականության փորձագետ

Իրանի դեմ մղված պատերազմը չի ավարտվել: Այն նոր փուլ է թեւակոխում մի քանի որոշակի առանձնահատկություններով, որոնցից ամենահատկանշականն այն է, որ այն կարող է վերածվել հյուծման պատերազմի (war of attrition), որի ընթացքում Մ. Նահանգները կփակի Հորմուզի նեղուցը եւ կսահմանափակի Իրանի նավթի արտահանումները՝ արձագանքելով տարածաշրջանային նավարկությանը խոչընդոտող Իրանի ձեռնարկած քայլերին: Եթե այս սցենարը ռազմավարականորեն ճիշտ գործադրվի, ապա նման շրջափակումը կարող է ժամանակի ընթացքում որոշակի ազդեցություն ունենալ: Բայց Իրանը կարող է հակադարձել՝ թիրախավորելով հարեւան երկրների (ներառյալ Օմանի) նավթարտահանման ենթակառուցվածքները, էլ ավելի ապակայունացնելով համաշխարհային էներգիայի շուկաներն ու առավել բարձրացնելով նավթի գները նաեւ Մ. Նահանգներում, ինչը անբարենպաստ պայմաններ կստեղծի ԱՄՆ միջանկյալ ընտրություններից առաջ: Իրանի ռազմական ոլորտի բարձրաստիճան պաշտոնյաները նաեւ զգուշացրել են, որ դեպի Հորմուզի նեղուցը կատարված որեւէ ամերիկյան նավային շարժ կհանգեցնի անմիջական ուղիղ հարձակման:

Սկզբից եւեթ այս հակամարտության ժամանակն ու հետագիծը անկանխատեսելի էր եւ միեւնույն անորոշությունը հիմա կարելի է տեսնել նրա ավարտին մոտ: Առանց Իրանի քաղաքական համակարգում կառուցվածքային փոփոխության հասնելու դժվար է ասել, թե ինչ մակարդակի հաջողության են իրականում հասել Մ. Նահանգներն ու Իսրայելը: Նույնիսկ տնտեսական նշանակալի ճնշումների դեպքում Իրանը կկարողանա տոկալ եւ շարունակել դիմադրել առանց իր կառավարական համակարգի փլուզմանը:

Դիվանագիտական հեռանկարները նույնպես անորոշ են մնում, մինչ բազմաթիվ երկրներ փորձում են միջնորդ հանդիսանալ, ներկա դրությամբ ոչ մի հստակ բանակցային ձեւաչափ չի գործում: Հստակ է միայն այն, որ Միջին Արեւելքը նույնը չի լինելու այս հակամարտությունից հետո: Միեւնույն ժամանակ չափազանց վաղ է խոսել խաղաղության մասին, հատկապես Մ. Նահանգներ-Իրան հարաբերությունների համատեքստում: Ներկայիս ընթացող երկշաբաթյա հրադադարը մի փոքր հույսեր առաջացրեց, բայց բանակցությունների ընդհատումը էլ ավելի փխրուն է դարձրել դիվանագիտական որեւէ առաջընթացի հնարավորությունը: Մոտ ապագայում Ամերիկան կարող է շարունակել հարվածներ հասցնել Իրանի ենթակառուցվածքների վրա, միաժամանակ վերադասավորելով իր ռազմական դիրքերը տարածաշրջանային հենակետերում:

Բայց երկարաժամկետ հակամարտությունը կարող է Իրանից այն կողմ անցնել, ներթափանցել եւ վնասել հարեւան երկրներին, որոնք անմիջականորեն ներգրավված չեն հակամարտության մեջ: Ռիսկային այդ երկրներից մեկը Հայաստանն է: Հայաստանի արտգործնախարարի վերջերս կատարած հայտարարություններից պարզվում է, որ «Միջազգային խաղաղության եւ բարգավաճման Թրամփի ուղի» (TRIPP) կոչված ծրագիրը շատ քիչ առաջընթաց է արձանագրել եւ դուռ է բացել հնարավոր ձգձգումների, ինչը նշանակում է, որ ԱՄՆ-ն զգուշավոր մոտեցում է ցուցաբերում ներկա պայմաններում իր ներկայությունը պահպանելու Իրանի մոտիկ տարածքներում:

Կարեւոր է հասկանալ, որ TRIPP-ը սոսկ Ադրբեջանը Նախիջեւանին կապելու տրանսպորտային միջանցք չէ, այլ մի մասն է տարածաշրջանային ավելի մեծ մարտավարության, որի նպատակն է շրջանցել Իրանը: Այդ ծրագրի կատարման ձգձգումները կարող են նոր աշխարհաքաղաքական խնդիրներ, ճնշումներ առաջացնել: Ադրբեջանը, որ շուտափույթ հաղորդակցություն է մտադիր իրականացնել Նախիջեւանի հետ, կարող է այլընտրանքային միջոցներ որդեգրել այդ միջանցքը ձեռք բերելու համար, որպես արդարացում մատնանշելով Իրանի շուրջ ստեղծված անկայունության հանգամանքը: Իսկ դա էլ, իր հերթին, ավելորդ լարվածություն կարող է առաջացնել հայ-ադրբեջանական առանց այն էլ փխրուն խաղաղության գործընթացում: Խաղաղության համաձայնագիրը կնքելու հետագա ձգձգումները հավելյալ մարտահրավերների առաջ են կանգնեցնում Հայաստանին, քանի որ համաձայնագիրն ու TRIPP-ը ներկայիս ծառայում են որպես Հարավային Կովկասում հարաբերական կայունությունը պահպանելու առաջնային մեխանիզմ:




Հայաստանին սպառնացող մյուս մարտահրավերը ռեգիոնալ օդային տարածքի խախտումներն են, որոնք լոգիստիկ եւ տնտեսական ճնշումներ են առաջացնում: Բազմաթիվ ավիաուղիներ, ներառյալ «Middle East-ը» նախկինում Իրանի օդային տարածքն էին օգտագործում Հայաստան հասնելու համար, իսկ այժմ, երբ այդ ուղիները սահմանափակվել են, թռիչքների ժամանակը ավելի երկարացվել է եւ տոմսերի գինն էլ ավելի թանկացել: Սա ոչ միայն կանոնավոր հաղորդակցությանն է խանգարում, այլեւ սպառնում զբոսաշրջության աճի տեմպերին: Նշենք, որ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանն առանձին վերցրած մոտ 6 միլիոն ուղեւորի է սպասարկել անցյալ տարի: Վառելիքի գների աճն ու թռիչքի ժամանակի երկարացումները ավելորդ լարվածություն են առաջացնում Հայաստանի տնտեսության ոլորտում՝ կապված հակամարտության ընդարձակման հետ: Հարցն առավել բարդանում է Հայաստան-Իրան սահմանային առեւտրաշրջանառության ոլորտում հնարավոր որոշակի անկումով եւ համագործակցության նվազումով, հատկապես այնպիսի կարեւոր բնագավառներում, ինչպիսին էներգետիկան է: Վերջին հաշվով այս պատերազմը ոչ միայն վերաձեւավորում է ուժերի հավասարակշռությունը Միջին Արեւելքում եւ բացասական ազդեցություն գործում գլոբալ տնտեսության վրա, այլեւ նշանակալի ճնշում բանեցնում տարածաշրջանի փոքր պետությունների վրա, ինչպիսին Հայաստանն է, որի տնտեսական ճկունությունը խիստ սահմանափակ է:

**Անգլ. բնագրից թարգմանեց**
**ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**
**(The Armenian Mirror-Spectator)**

# Ո՞վ է կանգնել պաշտպան երկրին իմ... անանդորր

## *Եվ մինչեւ ե՞րբ են խախտվելու մեր երկրի կարգ ու օրենքները*

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Այնքան տառապած ու այնքան խաբված մեր երկիրը երկու օր դարձել էր Եվրոպայի քաղաքական համայնքի մի տեսակ կենտրոն: Հնչեղ անուններ ու դեմքեր եկան, գեղեցիկ խոսեցին, ժպտացին, մաս կազմեցին իշխող քաղաքական ուժի նախընտրական քարոզչությանը եւ մեր ամբիոններից հակառուսականություն հնչեցնելով, գնացին՝ ամեն մեկն իր գործին ու շահին, մեզ թողնելով մեր մարտահրավերների ու հոգսերի հետ մենակ: Այս գագաթնաժողովի գուցե բուն ուղղվածության առումով խոսուն էր նախքան դրա սկսվելը՝ ամսի 4-ի առավոտյան, բրիտանական «Գարդիան»-ում հրապարակված հոդվածի երկվերնագիրն իսկ՝ «ԵՄ-ն ամրապնդում է կապերը Հայաստանի հետ՝ փորձագետներ ուղարկելով Ռուսաստանի միջամտությանը հակազդելու համար. երեքշաբթի դաշինքի առաջնորդները կանցկացնեն առաջին գագաթնաժողովը Հայաստանի հետ՝ Կրեմլի ազդեցության դեմ պայքարի ջանքերն ուժեղացնելու համար»: Ու նաեւ՝ Ուկրաինայի նախագահ Զելենսկուն հրավիրելը, նրան երեւանյան ամբիոն տրամադրելը...

Ախր Ռուսաստանը մեզ բարեկամ է թե ոչ՝ դա այլ հարց է, մենք դա մեկ անգամ չէ, որ տեսել ենք: Բայց պաշտոնական Երեւանի կողմից այսպիսի «կտրուկ շարժում անելը», այս հակադիվանագիտական, բացահայտ թշնամական թվացող ժեստը մի տերության դեմ, որի ձեռքում են, առնվազն, մեր տնտեսական տարբեր ենթակառուցվածքներ, մեզ վրա էժա՞ն կնստի, ու ի՞նչ հույսով է արվում: Հապա ինչի՞ համար էր վարչապետ Փաշինյանը ապրիլի 1-ին Պուտինի մոտ գնացել...

Եվրոպացի բարձրաստիճան պաշտոնյաների համար երեւի տեսանելի չէր եւ հաստատ հետաքրքիր էլ չէր, որ այսօր մեր պետությունում իրական ժողովրդավարությունից ու օրինապահությունից միայն այդ բառերն են մնացել, իսկ ամեն ինչ վճռվում է գլխավոր պատասխանատու պաշտոնյա անձի կամքով ու քմահաճույքով: Դրա մի ցցուն դրսեւորումը մեր Եկեղեցու եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի դեմ շարունակվող անօրինական ու, մեղմ ասած, անհամեստ արշավն է:

Երբ «Ազգի» մի համարը տեխնիկական պատճառներով լույս չէր տեսել, ուզում էինք վրդովմունքով անդրադառնալ տեղի ունեցած ապրիլքսանչորսյան հերթական ավանդական երթի հետ կապված մի դրվագի: Մարդիկ պետության պաշտոնական պատվիրակությունից հետո հազար-հազարներով (թեեւ Հ1-ը կադրի տակ վազող տողով ընդամենը «հարյուրներով» էր գրել) գնում էին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու Ցեղասպանության մեր բյուրավոր անմեղ զոհերի հիշատակին: (Ի դեպ, գոնե մեզ համար անընդունելի նորություն թվաց պաշտոնյաների այցի ուղեկցումը այդտեղ երկրի օրհներգի երգչախմբային բարձրաձայն կենդանի կատարմամբ: Դա լռությա՛ն վայր է: Հարգալից եւ առավել տարողունա՛կ լռության): Երկրի ղեկավարներն ավանդաբար միշտ, մինչ փաշինյանական այս արշավը, այդ օրը հուշահամալիր են գնացել Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ միասին: Հիմա ոչ միայն նրա հետ չեն գնում, այլ նաեւ Հանրայինի լուրերի երեկոյան հիմնական թողարկումից կաթողիկոսի այցի դրվագն ամբողջությամբ հանված, դուրս էր թողնված... Ի՞նչ իրավունքով:

Եվ կասե՞ք՝ ինչո՞ւ պիտի Հանրային, այսինքն քաղաքացիների հարկերով պահվող հեռուստատեսությունը Աստծու ամեն օրը մեզ պարտադրի իր եթերում երկա՜ր ու անվերջ լսել երկրի ներկա վարչապետ պաշտոնյայի նորանոր անսովոր մտքերը, միակողմանիորեն դիտել, լսել նրա, իր թիմի նախընտրական քարոզչության նյութերը, իսկ Հայ Առաքելական եկեղեցու օծյալ գահակալ, համայն հավատավոր հայության հոգեւոր առաջնորդ Ամենայն Հայոց կաթողիկոսի առջեւ փակ լինի եւ մենք էլ՝ գոնե նման կարեւոր առիթներով նրան եթերում տեսնելու, կատարվող հոգեւոր կարգին հաղորդակից լինելու եւ իր հոգեշահ խոսքը լսելու իրավունքից զրկված: Չհաշված նույն այդ եթերում Հայ եկեղեցու առաջնորդի հասցեին տարբեր մեծ ու փոքր պաշտոնյաների բերանից երբ ասես հնչող անհարգալից արտահայտությունները:

Անկեղծ՝ չգիտենք ինչքան են ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավասությունները ու դրանց սահմանները, բայց այստեղ էլ որոշ լուրջ թվացող հարցականներ են առաջանում: Որքան հայտնի է, հունիսի 7-ի համապետական ընտրությունների քարոզարշավը պաշտոնապես սկսվելու է մայիսի 8-ին: Իսկ ՔՊ-ի եւ երկիրը կառավարող նրա ղեկավարության նախընտրական քարոզչական այցերը, հիշում ենք, սկսվել են տխուր առումով մտապահված փետրվարի 28-ից, դարձյալ Հանրայինով ցուցադրված «ուրախ ավտոբուսով» ու անգամ, ներողություն, «պեռաշկի»-«կուկուռուզով», երբ նույն օրը անմիջապես մեր հարեւան երկրում բռնկվել էր տարածաշրջանին սպառնացող հայտնի ահեղ պատերազմական հրդեհը... Ժամկետից այսքան շուտ սկսված ու շարունակված այս քարոզչական կամպանիան օրենքի խախտո՞ւմ էր, թե՞ ոչ:

Եվ վերջապես՝ առավել տարակուսելին: Ըստ շրջանառված տեղեկատվության, ԿԸՀ-ն առաջիկա ընտրություններին մասնակցության համար առանց քվեարկության գրանցել է հայտ ներկայացրած մի քանի քաղաքական ուժերի, այդ թվում՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը: Իբրեւ պետական իշխանություն իր իրավասությունները վերազանցած ՔՊ վերնախավը, շարունակելով սահմանադրական օրենքի կոպիտ խախտումը, Եկեղեցու ներքին կյանքին միջամտելու արտառոց քայլեր էր մտցրել անգամ իր նախընտրական ծրագրի մեջ՝ կաթողիկոսի պաշտոնազրկում, նոր կաթողիկոսի ընտրություն... Այսպիսի ծրագրով որեւէ միավորի գրանցումն արդյո՞ք օրինական կարող է համարվել ու նաեւ պատասխանատվություն չի՞ ենթադրում հանձնաժողովի եւ նրա անդամների համար:

⇨1 «2023-ի աշնանը գրեթե 150,000 էթնիկ հայեր ստիպված են եղել լքել իրենց հայրենիքը՝ ԼՂ-ն, թողնել իրենց ունեցվածքը եւ ապաստան որոնել Հայաստանում: Նրանցից մեկը Աշոտ Դանիելյանն է: Նա անցյալ տարի ընտրվել է ԼՂ-ի վտարանդի խորհրդարանի նախագահ, դառնալով տեղահանված ղարաբաղցի հայերի ամենակարեւոր ներկայացուցիչներից մեկը: Բեռն այցի ժամանակ Դանիելյանը բացատրել է, որ ԼՂ-ից հարկադրաբար Հայաստան գաղթած արցախցիները այժմ բազմաթիվ մարտահրավերների են բախվում՝ դժվարանում են աշխատանք կամ մատչելի բնակարան գտնել: Իսկ Հայաստանի իշխանությունների բյուրոկրատիան հավելյալ ծանրացնում է ղարաբաղցի հայերի կյանքը. վերջիններս չէին կարող բռնագաղթի, փախուստի ժամանակ իրենց հետ վերցնել բոլոր փաստաթղթերը: Այս շաբաթ Աշոտ Դանիելյանը կարողացավ բանակցություններ վարել խորհրդարանի անդամների հետ Բեռնի Դաշնային խորհրդարանի շենքում: Նա իր երախտագիտությունը հայտնեց ԼՂ հայերի մտահոգությունների նկատմամբ լայնածավալ համակրանքի եւ աջակցության համար»: Այնուհետ հաղորդման հեղինակը հիշատակում է 24.4259 բանաձեւը, որով Շվեյցարիայի օրենսդիրը կոչ է անում գործադիրին կազմակերպել խաղաղության ֆորում: Շվեյցարիան պետք է պաշտպանի Ադրբեջանի եւ Ղարաբաղի հայերի միջեւ ուղիղ երկխոսությունը՝ տեղահանված հայերի վերադարձը հնարավոր դարձնելու նպատակով: «Իրականում խնդիրը դժվար է լուծել: Արտաքին գործերի դաշնային դեպարտամենտն ի պատասխան SRF-ի հարցման գրել է. «ՀՀ-ի եւ Ադրբեջանի իշխանությունների հետ քննարկումների ժամանակ 24.4259 բանաձեւն իրականացնելու հարցը մի քանի անգամ արծարծվել է: Երկու կողմն էլ հաստատել են, որ նման ֆորումը ցանկալի չէ: Հետեւաբար, այն անցկացնելու պայմանները բավարար չեն»: Սույն պատասխանին հակադարձում է Շվեյցարիայի ազգային խորհրդի կենտրոնամետ անդամ, Շվեյցարիա-Հայաստան ընկերակցության համանախագահ Ստեֆան Մյուլլեր-Ալթերմատը՝ SRF -ին հայտնելով. «Եթե թաքնվենք այն հայտարարության հետեւում, որ երկու երկրները չեն ուզում կամ չեն կարող, ապա ԼՂ- ից տեղահանված անձինք դրանից ոչինչ չեն շահի»:

«Չեզոքությունը եւ միջազգային իրավունքը՝ հակամարտության մեջ: ԱԳ դաշնային դեպարտամենտը մարդու իրավունքների տեսանկյունն ընդունում է: Շվեյցարիան հրապարակավ արտահայտվել է, որ ԼՂ-ից փախստականներն իրավունք ունենան վերադառնալու իրենց հայրենի տարածաշրջան: Միեւնույն ժամանակ ընդգծել, որ միջազգային իրավունքի համաձայն ԼՂ պատկանում է Ադրբեջանին: Հետեւաբար ԼՂ խորհրդարանի խոսնակին Բեռնի ԱԳ դաշնային ներկայացուցչությունում չեն ընդունել: Շվեյցարիայի արտաքին քաղաքականության համար նաեւ այլ դժվարություններ էլ կան: . Հայաստանն ու Ադրբեջանն այժմ խաղաղության իրենց բանակցություններում ապավինում են ԱՄՆ միջնորդությանը, այլ ոչ թե ԵԱՀԿ-ին, որը նախագահում է Շվեյցարիան: Նախատեսվող խաղաղության համաձայնագիրը խիստ վիճահարույց է Հայաստանում, քանի որ այն բացառում է ԼՂ-ից տեղահանված հայերի վերադարձի իրավունքը: Միջազգային ճնշման բացակայության, Ադրբեջանի ռազմական գերազանցության պատճառով ղարաբաղցի հայերի պահանջները անտեսման վտանգն ունեն»:

# Շվեյցարական օրակարգում միշտ արդիական պահել Արցախի հարցը



*Բեռնում, ապրիլի 30-ի նիստից մի դրվագ*

Բեռնի ապրիլի 30-ի նիստին մասնակցել են 12 օրենսդիրներ, ելույթ են ունեցել **Էրիխ Ֆոնքոբելն** ու **Ստեֆան Մյուլլեր- Ալթերմատը,** Արցախի ԱԺ նախագահ **Աշոտ Դանիելյանը**, Արցախի մշակույթի նախկին նախարար, Արցախի թեմական խորհրդի ատենապետ **Լեռնիկ Հովհաննիսյանը**, Արցախի ԱԳ նախկին փոխնախարար, Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հանձնախմբի անդամ **Արմինե Ալեքսանյանը:** Ներկա են եղել նաեւ Արցախի ԱԺ-ի կողմից ստեղծված նույն հանձնախմբի անդամներ **Մարիո Նալբանդյանը**, **Գառնիկ Քերքոնյանը: Քրիստոնեական համերաշխություն միջազգային (SCI)** կազմակերպության 4 անդամներ՝ **Ջոյել Վելդքամփի** գլխավորությամբ, շվեյցարահայ համայնքից՝ **Սարգիս Շահինյանը**, **Վիգեն Չըթըրյանը**, **Աննա Հեսս Սարգսյանը, Անի Ղազարյանը, Մանուշակ Գառնուզյանը:**

«Ազգը» զրուցել է նիստի մասնակիցների հետ: **Ի՞նչ ակնկալիք ունեին նիստից, արդարացա՞ն սպասումները:**

Արցախի նախկին փոխարտգործնախարար, այժմ Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հանձնախմբի անդամ **Արմինե Ալեքսանյանն** այսպես պատասխանեց.

- 2025 թվականի մայիսի 26-ին Բեռնում պաշտոնապես ստեղծվել է «Շվեյցարական խաղաղության նախաձեռնություն հանուն ԼՂ-ի» հանձնախումբը: Հանձնախմբի նպատակն է աջակցել Շվեյցարիայի խորհրդարանի հաստատած խաղաղության գործընթացին եւ բանակցային սեղանի շուրջ ձայնի իրավունք տալ ԼՂ-ից տեղահանված հայ բնակչությանը՝ հնարավոր դարձնելով նրանց հավաքական եւ արժանապատիվ վերադարձը: Մեկ տարի առաջ ստանձնած հանձնառությունը ոչ միայն հաստատվեց ապրիլի 30-ի նիստի ժամանակ, այլեւ նշվեց դրան ավելի հստակ գործնական ընթացք տալու անհրաժեշտությունը: Կարեւոր է, որ Շվեյցարիայի օրենսդիրները վերահաստատեցին իրենց քաղաքական դիրքորոշումը՝ նպաստելու Արցախի հայ բնակչության իրավունքների պաշտպանությանը: Դեռեւս շատ անելիք ունենք նախատեսված խաղաղության ֆորումը հնարավորինս արագ կազմակերպելու ուղղությամբ: Այս առումով նիստը կարեւոր փուլ էր՝ վերահաստատելու հանձնառությունը եւ քննարկելու հետագա քայլերը: Բարձր ենք գնահատում շվեյցարիացի խորհրդարանականների, իրավապաշտպան կազմակերպությունների պատրաստակամությունը շարունակելու ջանքեր գործադրել գործընթացը գործնական դաշտ փոխադրելու ուղղությամբ, հատկապես եթե հաշվի առնենք, որ Հայաստանի ներկայիս իշխանությունները հարցը ոչ միայն փակված են համարում, այլեւ արցախահայության իրավունքների համար պայքարը դիտարկում են որպես անվտանգային սպառնալիք: Եվ իհարկե տեղին կլիներ, որ ավելի շատ երկրներ միանային եւ հետեւեին Շվեյցարիայի օրինակին եւ վերահաստատեին մարդու իրավունքներին եւ համամարդկային արժեքներին իրենց հավատարմությունը:

Միշտ կարեւոր է, որ գտնվեն մարդիկ, որ իրապես սրտացավ են դիմացինի տառապանքի հանդեպ եւ սկզբունքային դիրքորոշում ունեն մարդու իրավունքների խախտումների հարցում: Հանձնախմբի համանախագահներ Ազգային խորհրդի պատգամավորներ Էրիխ Ֆոնքոբելն ու Ստեֆան Մյուլլեր-Ալթերմատը եզակի են իրենց՝ Արցախի հանդեպ հանձնառությամբ: Իհարկե այս նախաձեռնությունն ամրանում է Քրիստոնեական համերաշխություն իրավապաշտպան կազմակերպության ամենօրյա քրտնաջան աշխատանքի շնորհիվ, որ ապացուցում է՝ միշտ պետք է պայքարել սեփական իրավունքների համար, եթե նույնիսկ շրջակա աշխարհը կույր է ձեւանում: Երախտապարտ ենք հայ համայնքի մեր բոլոր այն բարեկամներին, որ մեզ հետ հավասար այս պայքարի մեջ են, ուժ եւ հավատ են ներշնչում արցախցիներին դիմակայելու այսօրվա դժվարություններին ՝ապագայում հայրենիք վերադառնալու սպասումով:

**- Տիկի՛ն Ալեքսանյան, Շվեյցարիայի գործադիրը մեկ տարի անց չի կազմակերպել Ադրբեջանի եւ ԼՂ ներկայացուցիչների միջեւ խաղաղության ֆորումը, չի կատարել օրենսդիրի քվեարկությամբ օրենքի ուժ ստացած բանաձեւի պահանջը: Նիստում ուրվագծվե՞ց, թե դրան հասնելու ո՞ր ուղին է հնարավոր:**

- Նիստի ընթացքում քննարկվեցին հնարավոր այն քայլերը, որ անհրաժեշտ են գործընթացն առաջ մղելու համար: Տարբեր տեսակետներ հնչեցին՝ սկսած գործադիրին հարցումներ եւ առաջարկներ ուղղելուց, մինչեւ միջազգային գործընկերների հետ համակարգված աշխատանք տանելու անհրաժեշտությունը: Բոլոր առաջարկների նպատակն էր ձեւավորել պայմաններ, որոնցում նման ֆորումի կազմակերպումը կդառնա իրատեսական: Կարեւոր է թերեւս այն, որ բոլոր ներկաներն էլ հստակ գիտակցում էին, որ արցախահայության իրավունքներն առայսօր շարունակում են խախտվել՝ թե՛ բնաջնջելով նրանց բնօրրանն ու բազմադարյա հոգեւոր եւ մշակութային ժառանգությունը եւ թե՛Բաքվում ապօրինաբար, շինծու մեղադրանքներով պահվող մեր հայրենակիցների հարցը:

**- Հիմնարար խախտված իրավունքների մեջ ո՞րն է արցախցու առաջնային պահանջը(ները):**

- Առաջնայինը մարդու անվտանգության եւ արժանապատիվ կյանքի իրավունքն է, այսինքն արցախցին պետք է վերադառնա Արցախ՝ իր բոլոր իրավունքներով հանդերձ ՝ ներառյալ ինքնորոշման իրավունքը: Այն բաղկացած է մի քանի կարեւոր բաղադրիչներից՝ անվտանգ, արժանապատիվ եւ հավաքական վերադարձի ապահովում՝ միջազգային կայուն երաշխիքների ներքո, սեփականության իրավունքների պաշտպանություն եւ այլն: Հասկանալի է, որ առանց անվտանգության երաշխիքների՝ մյուս իրավունքների վերականգնումը դժվար է պատկերացնել:

**- Բացի վերոհիշյալից Շվեյցարիայում ուրիշ ի՞նչ հանդիպումներ եղան:**

- Հանդիպեցինք միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, փորձագիտական շրջանակների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Այդ հանդիպումները կարեւոր էին՝ իրավիճակի բազմակողմանի ընկալում ձեւավորելու եւ հետագա քայլերն ավելի համակարգված դարձնելու համար: Այդ հանդիպումների ընթացքում խոսվեց Բաքվում ապօրինաբար պահվող մեր գերիներին անհապաղ ազատ արձակելու, հոգեւոր եւ մշակութային ժառանգության պաշտպանության, արցախահայության ներկայիս խնդիրների մասին:

*Նիստի մասնակիցների հետ զրույցի շարունակությունը առաջիկա համարում*

## Արարատ

Խորախոհ տրտում քո
հայացքի մեջ,
Տեսնում եմ սրտիդ
թախիծը անհուն,
Գլուխդ պահած
սպիտակ ձյունի մեջ,
Տեսնում եմ թափած
արցունքդ թաքուն:
Ազատ երկրից մեծ ու
լայնարձակ,
Երեւում ես մեզ, որպես
հուշարձան,
Կծագի քեզ էլ պայծառ
արեգակ,
Այդպես է ասում՝
սրտումս մի բայն:



*30.VII.51 թ.*
**ԼԻԴԱ ԱՆՏՈՆՅԱՆ**

# Եվրահայաստանն ու մեր քաղաքական ուժերի մաքսիմալիզմը




⇨1 Ու անգամ չափազանցումները, որ միայն այս իշխանության օրոք են հնարավոր դարձել չորս տասնյակից ավելի եվրոպական երկրների առաջին ռանգի պաշտոնյաների հավաքվելն Երեւանում, կամ Հայաստանին աջակցելու եվրոպական պատրաստակամությունն ու խոստումները, շատ ելույթների մեջ ռուսական ուղղությամբ գլորվող տակառները, չէր կարելի հիմք համարել այն մաքսիմալիզմի համար, որով մեր իշխանությունն ու ընդդիմությունն իրենց քաղաքական նպատակների համար փորձում էին նեղացնել կամ լայնացնել, գերգովել կամ գերփնովել եվրոպական այս իրադարձությունը՝ մեկը գերագնահատելով Հայաստանի իշխանության ներկա դերակատարումն այդ բոլորում, մյուսը հակառուսականության դաշտ տանելով եւ իշխանության քննադատության մշտական նպատակին ծառայեցնելով այն բոլոր առիթները, որոնք չէին կարող չլինել գագաթնաժողովի ելույթներում, եթե նկատի առնենք, որ Եվրոպան ինքն էլ բազմաթիվ խնդիրներ ու մարտահրավերներ ունի՝ էներգետիկ, տնտեսական, անվտանգային: Վերջիններն արտացոլված էին ե՛ւ Եվրոպական խորհրդի նախագահ Անտոնիու Կոշտայի, ե՛ւ Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի, եւ մյուս եվրապաշտոնյաների ելույթներում, ֆոն դեր Լայենն անգամ ենթատեքստով լավ էլ քննադատում էր Թրամփի եվրոպական քաղաքականությունը: Մանավանդ բոլորի, անգամ Եվրոպայի հետ առնչություն չունեցող Կանադայի, ԵՄ անդամ չհանդիսացող Մեծ Բրիտանիայի վարչապետերի, Թուրքիայի եւ Ադրբեջանի փոխնախագահների, Ալիեւի տեսակապով ելույթներն էին այդ հնարավորությունը տալիս:

Բայց այդ բոլորին եթե պետության շահի, հեղինակության, վարկի առումով հայացք նետվեր՝ապա այն խոսույթը, որ գագաթնաժողովի արդյունքները գնահատելիս ծավալեցին ինչպես իշխանական ներկայացուցիչները, այնպես էլ եվրոպական ամեն ինչին հակառուսականության պատուհանից նայող ընդդիմությունը, եվրահիրադարձության առաջին պահից սկսյալ՝ մինչեւ թեման պոստֆակտում արծարծած Հայաստանի ԱԺ նախագահի վերջին ճեպազրույցը, ապա կարելի է հանգիստ նշել, որ մերոնք, անկախ զբաղեցրած բարձր պաշտոններից եւ կուսակցական առաջնորդ լինելու պատասխանատու կարգավիճակից, այդպես էլ լիովին չեն նույնանում պետական գործիչ լինելու կոչման հետ, պետական գործիչ համարվողների վարքն ու խոսույթը չի մաքրվում խմբային շահախնդրությունից, պոպուլիզմից: Մինչդեռ բացառիկ դեպքերում գոնե հանուն պետության եւ նրա վարկի՝ դրանք պետք է տեղը զիջեն միայն պետության շահի, պետության վարկին չվնասելու գիտակցմանը:

Իհարկե, համաձայն ենք, որ կամա, թե ակամա, մտածված, թե ինքնաբերաբար, այս մասշտաբի եվրահիրադարձությունը իշխանությանն աջակցության արար էր Հայաստանում առաջիկա ընտրությունների դռանը՝ ի տեղի եւ ի ժամանակի: Հայաստանի իշխանության հանդեպ եվրապաշտոնյաների ընդգծված համակրանքն իր ազդեցությունն ունեցավ սովորական հայ մարդու վրա, որը, հետեւելով Անտոնիու Կոշտայի, Ուրսուլա ֆոն դեր Լայենի, Էմանուիլ Մակրոնի, մյուսների ելույթներին եւ պահելաձեւին, դրանք հենց այդպես էլ ընկալել է՝ իշխանության եւ վարչապետի հանդեպ եվրոպական հովանավորություն որպես:

Իսկ Մակրոնի բացահայտ աջակցությունը Նիկոլ Փաշինյանին, անկախ նրանից, որ Մակրոնը պարզապես իր երկրի աշխարհաքաղաքական շահն է սպասարկում նախ, ինչպես եւ եվրոպաշտոնյաները, ակնկալում Հայաստանի միջոցով տարածաշրջանային ազդեցության մեծացում, տնտեսական, լոգիստիկ, էներգակիր, հանքահումքային նոր ռեսուրսներ ձեռք գցելու հնարավորություն՝ էմոցիոնալ մակարդակով առաջնային մակարդակում էր, ու թեեւ սերը քաղաքական, տնտեսական ու անգամ անվտանգային կատեգորիա չէ, միեւնույն է, հայ հասարակ մարդու վրա իր հոգեբանական ազդեցությունը գործեց, որպես մոտակա ընտրությունների կողմնորոշիչ գործոն եւ մնացած քաղաքական ուժերին գոտկատեղից ներքեւ հարված:

Համաձայն ենք նաեւ այն մարդկանց հետ, որոնք արցախցիներին սեպերատիստ ու ռազմական հանցագործ անվանող Ալիեւին Հայաստանի իշխանությունից եւ անձամբ Փաշինյանից արժանի հակահարված էին սպասում, որի փոխարեն Եվրոպական խորհրդարանի նախագահ Ռոբերտա Մեցոլան էր պատասխանում: Որ եվրոպացիներն այդպես էլ արցախցիների մարդկային, հումանիտար, մշակութային ժառանգության իրավունքներն իրենցը չհամարեցին, մի թեթեւ Մակրոնը խոստացավ Ադրբեջանի հետ քննարկել մեր գերիների հարցը:

Բոլոր դեպքերում ե՛ւ ընդդիմությունը, ե՛ւ իշխանությունը դիվանագիտորեն պետք է հավասարակշռեին մեզ համար կարեւոր այս իրադարձության՝ Ռուսաստանին գրգռող խոսույթը զուտ երկրի տնտեսական եւ անվտանգային շահերի բալանսավորման առումով, չնայած Հայաստանում բոլորն էլ այլեւս առաջվանը չեն եւ Արցախի կորստով Ռուսաստանի ու միջազգային մյուս բոլոր դերակատարների, այդ թվում՝ Եվրոպայի իրական դեմքը գնահատել են:

Գործնական արդյունքի առումով ստորագրված հռչակագրերը ցանկություններ են՝ արեւային էներգետիկայի, տրանսպորտային ենթակառուցվածքների, թվային տեխնոլոգիաների ոլորտում եվրոպական ներդրումների եւ վաղուց ու ընդմիշտ սպասվելիք 2,5 մլրդ եվրոյի ընդհանուր ներդրումային խոստումի մասին:

Ընդ որում՝ եվրապաշտոնյաներն իրենց ելույթներում անընդհատ նշում էին Ռուսաստանի ազդեցության գոտուց Հայաստանի աստիճանաբար դուրս գալու, հիբրիդային պատերազմի դեմ պայքարելու անհրաժեշտության, խորհրդարանական ընտրություններին Հայաստանին աջակցելու, վիզային ռեժիմի ազատականացման հեռանկարի, ԵՄ ընդլայնման (Հայաստանի՝ ԵՄ անդամակցության անժամկետ հույսի ֆոնին) մասին:

Ֆրանսիայի նախագահի պետական այցի շրջանակում կնքված ռազմավարական համագործակցության փաստաթղթի մասով էլ էլի կարելի է պրագմատիկ-մտահոգ լինել, որ դա չի նշանակի Հայաստանի ռեսուրսային հարստություններին աչքադրելու բացվածք, Ֆրանսիայի շահախնդրությունը անհարմար դիտարան ունի «Վյոլա ջրով» , կոնյակի գործարանով, մեր կենսաթոշակային ֆոնդերի կառավարման իրավունքով եւ այլ նախադեպերով:

ԱԺ նախագահի՝ Բելառուսին ուղղված վերջին շրջանի սուր բնորոշումների եւ դրան Բելառուսի սուր արձագանքի առիթով երբ Ալեն Սիմոնյանին հարցնում էինք դիվանագիտական ձեւակերպումներով Հայաստանի շուրջ ավելորդ արտաքին լարվածություն չստեղծելու մասին, նրա այն պատասխանում, թե խորհրդարանականն ավելի ազատ է իր խոսքում եւ կարող է իրեն թույլ տալ այդպիսի ազատություն, իրատեսություն փնտրել հնարավոր չէր: Մեր կարծիքով պետության անվտանգությունն ավելի կարեւոր է անձերի նախընտրություններից, նրանց ազատությունների դրսեւորումներից, եւ պետական պաշտոնյան, այն էլ՝այդքան բարձր պաշտոն ունեցողը, միշտ պետք է ելնի ոչ թե իր խոսքի ազատության իրավունքի իրացումից կամ համարձակ գործչի կերպարի կերտումից, այլ պետության շահից, նրա արտաքին անվտանգային ֆոնում լարվածության առիթ չստեղծելուց, քանի որ այս դժվար ժամանակում եւ դժվար տարածաշրջանում ավելի խոհեմ ու դիվանագիտական մոտեցում է պահանջվում: Ալեն Սիմոնյանն ասում էր լրագրողներին, թե իշխանությունը զավթելու, քաղաքական օպերացիայի փորձ է տեղի ունենում, թույլ չի տրվելու ՀՀ-ն սարքեն գուբերնիա , ծայրագավառ, Հայաստանը չի ղեկավարվելու Բելառուսի պես, նախկինի պես ծնկած Հայաստան էլ չի լինելու, երբ ընտրություններ էին կեղծվում, եւ Հայաստանում «նամեստնիկ» էր նշանակվում:

Մի խոսքով եվրոպական դեսանտը Հայաստանում արեց այն, ինչ կանխատեսվում էր ի սկզբանե, մի քանի օր մոռացվեց, որ մայիսի 3-ին ԿԸՀ-ն արդեն գրանցել էր հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունների մասնակցող ուժերին՝ 17 կուսակցություն եւ երկու դաշինք, փաստաթղթերի հետ կապված խնդիրների պատճառով չգրանցելով ընդհանուր թվով 17 թեկնածուի (հետո դրանց ինքնաբացարկներ էլ են ավելացել), այդ թվում ԴՕԿ առաջին համար Վարդան Ղուկասյանին եւ «Այլանս» կուսակցության ցուցակի առաջին համար Տիգրան Ուրիխանյանին, վերջիններիս՝4 տարի անընդմեջ Հայաստանում չբնակվելու պատճառաբանությամբ: Քարոզչական պաշտոնական մեկնարկը մեր նյութի հրապարակման պահին տրված կհամարվի, մրցակցության ժամացույցը միացված է, իշխանական կուսակցության համար դա միացված էր արդեն իսկ՝ Եվրոպական գագաթնաժողովով եւ Մակրոնի այցով, հիմնական ֆավորիտ մյուս ուժերն էլ ձեռքերը ծալած չեն նստել, այսինքն՝ ագրեսիվ նախընտրական քարոզչությունը Հայաստանում շատ ավելի վաղ էր սկսվել: Միայն այն, որ համացանցում ուզած տեսանյութի դիտման ընթացքում միմյանց ոչնչացնելու բովանդակությամբ լցված գովազդներով ամեն պահի բերան, աչքուականջ են մտնում Փաշինյանին, Ծառուկյանի, Կարապետյանին, Քոչարյանին եւ մյուսներին իբր գովազդող, իրականում միմյանց վրա գործ տվող մեղադրական «դանոսները», տո հենց նշյալ եւ մյուս բոլոր ընտրադերակատար ազգանուններն են ողջ հասակով եւ մարմնամասերով բերանդ մտնում, արդեն ավետում է, որ ընտրական «մռակոբեսիեին» դիմանալու համար Աստծուց համբերելու ուժ ու կորով պիտի խնդրենք:

Իսկ խորհրդարանում այս շաբաթ Անդրանիկ Քոչարյանի ելույթով բացված պանդորայի տուփը՝ Խոռխոռունու, Արծրուն Մարգարյանի, Մարտի մեկի գործով սպանությունների վերաբերյալ, ի պատասխան ընդդիմության կողմից բարձրացված գաղտնալսումների եւ 44-օրյա պատերազմի հանգամանքները քննող հանձնաժողովի զեկույցի չհրապարակման թեմաների, հավանաբար նոր դրսեւորումներ դեռ կունենա՝ գլխավոր դատախազի, Սեյրան Օհանյանի եւ այլոց արձագանքներից է դա երեւում:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԵ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60